

ԱՐԷՏԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ՎԵՐՋԻՆ ԹԻԻ 1930Ի

ԹԻԻ 28-24

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿԻՆ ԻՐԱՆՈՒՆԲԸ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՄԷՆ ՎԵՐՋԱՆՈՐՈՒԹԻՒՆ ՍԿՋԵՆԱՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԴ ՎԵՐ. Ե. ԲԱՍՈՒՆԻ

ԲՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ ԹՐԳՄ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԱՂԵՂՆ ՈՒ ԵՐԳԸ ԹՐԳՄ. Յ. Վ. Է. ՄԱՐԹԱԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ՎԱՐԴԸ ԹՐԳՄ. Յ. Ն.

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆԼՈՒԾԵԼԻ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ ՏՈԳԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԻՆՉՊԼՄ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ Է Կ. ԴՊՐՈՑԻ ՊԱՇՏՄՆԲԸ. ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ

ԱՐԺԷՆԹԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՎՀ. ՀԱԼԷՊԼԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԸ * * *

ԹԷ ԻՆՉՈՒ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ ՀՆՉԵՑԻՆ ԹՐԳՄ. ՅՈՎԱԿԻՄ ՊԱԳԳԱԼԵԱՆ

ՆԱՄԱԿ

ՇՈՂԵՐ

ԼՈՒՐԵՐ

NOR AVEDAPER
 BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Արսունասեր՝ Վեր, Կ. Յարոսթրանեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խոշոքեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգրեց 160 դրու-
սուրի. Սուրբիոյ համար, և մէկ ու կէս
տուար՝ սուրիշ բոլոր երկիրներու համար:

Յօդուածներու բնագիրները չեն ղը-
կուիր եթէ այդ մասին փափաք չյայտ-
նուի յօդուածագիրներու կողմանէ. չհը-
րատարակուող յօդուածներու համար
պէտք է ղրկել փոստի ծախքը:

Յօդուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, գիւրըն-
թեռնիլի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առա-
ջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն
երբ փոփոխութեան ենթարկուի ան:

2ԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ ՏՈՒՆԷՔ «ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ»ԻՆ

Դ. տարուան առաջին թիւէն սկսեալ
թերթս պիտի ընդունի ամէն կարգի ծա-
նուցումներ գիւրամատչելի պայմաննե-
րով:

ՄԻ՛ ՈՒՇԱՆԱՐ

ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ «ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ»Ի
ՄՐՑՈՒՄԻՆ

2ՐԻ Ուսթըրմէնի ինքնահոս գրիչ
մը կամ ֆրանսկն. Lip գըր-
պանի՝ ժամացոյց մը պիտի տրուի բո-
լոր անոնց որ 1931, Յունւ. 1 էն մինչև
Մարտ 1, 16 բաժանորդներ կը գտնեն և
անոնց լման բաժնեգիրները գանձելով
կը ղրկեն մեզի:

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

16 ՏԱՐԵԿԱՆԷ ՎԱՐ ԵՐԿՍԵՌ ԲՈԼՈՐ
ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

1931 ի միջոցին

Գրել ունէ պատմութիւն կամ իրա-
կան ունէ պատմութիւն մը, որ պիտի
ըլլայ

1. Մաքուր ու ուղիղ լեզուով մը,
2. Հետաքրքրական և կրթիչ,
3. Ոչ աւելի քան 150 բառերէ բաղ-
կացած,
4. Թարգմանութիւն կամ ինքնա-

տիպ երեակայութեան արդիւնք, կամ
ունէ աղբիւրէ մը լսուած և յիշողութե-
նէն վերարտադրուած: Թարգմանու-
թեանց և յիշողութեան վերարտադրու-
թեանց աղբիւրները պէտք է յայտնուին:

Ուսանողները իրենց գրութիւնները
պէտք է յանձնեն իրենց պատկանած
դպրոցին տնօրէնութեան, որ աչակեր-
տին տարիքը և գրութեան անոր պատ-
կանիլը հաստատող երկտողով մը պէտք
է ղրկէ խմբագրութեանս:

Մրցումը պիտի սկսի Յունուար 1 ին
և պիտի տևէ մինչև Մարտ 1, որուն մի-
ջոցին առաջնութիւնը շահողը պիտի
ստանայ 300 դրուշ սուրի., Բ. աստիճա-
նը շահողը 200 դրուշ սուրի. և Գ. աս-
տիճանը շահողը 100 դրուշ սուրի.:

Շահող կամ չշահող ունէ մէկ գրու-
թիւն երբ յարմար տեսնուի պիտի հրա-
տարակուի ՄԱՆԿԱՆՑ ԷՋԻՆ մէջ:

Չշահող դպրոցականները իրաւունք
պիտի ունենան կէս գինով «Նոր Աւե-
տարեր» ստանալ, որ պիտի ղրկուի երբ
ան 75 դրուշ սուրիական ղրկէ խմբագ-
րութեան: Երբ մրցումի առաջին շըր-
ջանը լրանայ, պիտի սկսին Բ. և Գ.
շրջանները յաջորդաբար: Շահողները
կրնան ամէն շրջանին մէջ ալ մասնակցիլ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, ՎԵՐՋԻՆ ԹԻԻ 1930Ի

ԹԻԻ 23-24

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

Աշխարհն ու քաղաքակրթութիւնը շատ բան կը պարտին Հրեայ ազգին: Եբրայական հին ըմբռնումին համեմատ ընտանիքը ընկերային սուրբ հաստատութիւն մ'է, որուն մէջ մեծ կարեւորութիւն կը տրուէր մանուկի. անոր ծընունդը Աստուածային օրհնութիւն մը և ուրախութեան առիթ մը կը նկատուէր, իսկ ամուսնութիւնը ընկերային նախատինք և աստուածային պատիժ, հետեւաբար, տրտմեցուցիչ պարագայ մը կը նկատուէր: Ուրախալի է զիտեղ թէ այս պաշտօնաբարձ տակաւին բաւական զօրաւոր դիրք մը գրաւած է հայ ընտանիքներու մէջ ալ: Հայ ծնողները էապէս գուրդուրտ հայրեր և մայրեր են:

Միայն այս ըմբռնումը, սակայն, բաւական չէ մանուկին ապահովելու տրդար դիրք մը ընկերութեան մէջ: Երբ հարեանցի ակնարկ մը ձգենք մեր ներկայ ընկերային կեանքին վրայ պիտի տեսնենք որ մեր բոլոր ընկերային հաստատութիւնները, եկեղեցի, դպրոց, ընտանիք և այլն կը գործեն չափահաս մարդուն տեսակէտին, խորհելակերպին, իտէալին, փափաքին և յաճախ պահանջներուն համաձայն: Մեր ներկայ կեանքին մէջ, մէկ բառով չափահաս մարդն է որ գերակշիռ դիրք կը գրաւէ: Բիստօս հիւաւ աշխարհ յեղաշրջելու զայն նաև այս տեսակէտէն ալ: Անիկա վեր հանքսմանուկին արժէքը, քարոզելով մարդոց որ անոնց պէս ըլլան և չարգիւն զանոնք իրեն գալէ: Ընկերային կեանք

իկն առանցքն է ոչ թէ չափահասը սյունակն էր, որուն հասարակ էր և ապրին չափահասները: Այս հիմնական սկզբունքը ընդունելէ ետքը շատ դիւրին է մանուկին իրաւունքին մասին խորհիլ և գործել անոր համեմատ:

Մեծ Պատերազմէն ետքը և մասամբ անոր պատճառաւ յառաջ եկած շատ մը նորութիւններու մէջ պէտք է նկատել նաև մանուկներուն հանդէպ աշխարհի դիրքին և ըմբռնումին մէջ տեսնուած արմատական փոփոխութիւնը: Պատերազմի իբր անմիջական արդիւնք հարիւր հազարաւոր ամենազգի մանուկներ, թէ՛ Եւրոպա և թէ՛ Ասիա, անպաշտպան և իրենց բախտին լքուած վիճակի մէջ կը գտնուէին: Կեանքի ամենատարրական միջոցներէն զուրկ այս մանուկները, որոնց գոյութիւնն իսկ շատ անգիր անտանելի բեռ մը դարձած էր իրենց պատկանած համայնքին, մեծ մասամբ պիտի ոչնչանային, և վերապրողները մարդկութեան համար իսկական պատուհաս մը պիտի ըլլային, մեծցած ըլլալով ֆիզիքական և հոգեւոր ամէնէն աննպաստ պայմաններուն տակ, եթէ բարեօրինական կազմակերպութիւններ օգնութեան չհասնէին: Հեռատես, մարդասէր, գուրդուրտ անհատներ և կազմակերպութիւններ այս վտանգը նախատեսելով և անպաշտպան մանուկներու ընդգլխեցուցիչ թշուառութեան չհանդուրժելով փութացին զանոնք փրկել ֆիզիքական և հոգեւոր ստոյգ մահէ: Ահա այս պայմաններու տակ կարգ մը երկիրներու մէջ ծնունդ առին մանկապաշտպան ընկերութիւններ, — որոնք ներկայիս միջազգային մարմնի մը միջոցաւ կը գոր-

ծակցին իրարու հետ — և վերջապէս Ազգերու Դաշնակցութիւնը 1926 ին հըրատարակեց հինգ յօդուածներէ բաղկացեալ յայտարարութիւնը մանուկին իրաւունքներուն մասին, զորոնք ընդունեցին 47 ազգերու ներկայացուցիչները: Ասիկա պէտք է կարևոր քայլ մը նկատել ընկերային յառաջդիմութեան մէջ:

Մանկապաշտպան գործին նախակարապետը ըլլալու պատիւը կը պատկանի Փեսթալոցցիի, յայտնի Զուիցերացի մանկավարժը, որ ԺԸ. դարուն վերջը մանուկներու տուն մը հաստատեց: Մեծ Պատերազմի միջոցին և անկէ ետքը մասնաւոր յիշատակութեան արժանի են Հուվըր, Մ. Նահանգաց ներկայ նախագահը, Պենետիք ԺԵ. Պապը, և Միս էկլանթին Ճէպ, Անգլիացի օրիորդ մը, որ Սէյլ Թիլը Զիլսրէն անգլիական մանկապաշտպան մեծ կազմակերպութեան հիմնադիրը եղաւ:

Մանուկին իրաւունքներուն հիմնական կարեւոր մասերը ամփոփուած կըրնան ըլլալ երբ ըսենք՝ թէ Մանուկին իրաւունքն է՝ փրկիսպէս, մտաւորապէս և հոգեւորապէս բնակարան կերպով զարգանալու համար յարմարագոյն միջավայրի մէջ և պայմաններու տակ աշխարհ գալ և մեծնալ:

Այս գաղափարականը իրականացնելու համար մանուկներով հետաքրքրուողները պէտք է ունենան՝ 1. բաւականաչափ նիւթական միջոց, 2. մանուկը մեծցնելու և զայն դաստիարակելու մասին բաւականաչափ հմտութէն, 3. կորով և նուիրում:

Այս հարցը մեզի կը ներկայացնէ շատ մը բարդ խնդիրներ որոնցմէ են՝ մանուկը նախ քան իր ծնունդը, մանուկը ընտանիքին մէջ, մանուկը դպրոցին մէջ, մանուկը եկեղեցիին մէջ, մանուկը ընկերութիւններու մէջ, մանուկը փողոցի մէջ և այլն:

Ահա ասոնք — մայրը, տունը, դպրոցը եկեղեցին, ընկերութիւնը, փողոցն ու

գործատունը — մանուկը կերտելու մէջ կարեւոր ազդակներ են, որոնց բոլորն ալ պէտք է ուսումնասիրուին զիտական կերպով որպէսզի մանուկին կերտումը ըլլայ բնականոն և զօրաւոր, և ցեղին ապագան՝ ապահով:

Բայց իրականութիւն մ'է թէ ծնողներ, մասնաւորապէս մայրեր, և կրթական կազմակերպութիւններ տգէտ են մանկատաժական և մանկավարժական տարրական գիտելիքներուն մասին և զուրկ՝ նիւթական պէտք եղած միջոցներէ:

Ահա հոս է որ համայնքը ինքը պէտք է գործի ձեռնարկէ մանուկները պաշտպանելու համար, որոնք տգիտութեան և չքաւորութեան և երբեմն բարոյական անկումի գոհերն են: Եւ եթէ ան կը թիրանայ իր այս պարտականութեան մէջ՝ թերացումին համեմատական չափով պիտի տուժէ ապագային:

Ուրախութեամբ և շնորհակալութեամբ պէտք է յիշել հոս թէ Օր. Ֆ. Պիյորն, Նորվեգիացի հայասէր կինը, միքանի տարիէ ի վեր Հալէպի մէջ հաստատած է մանուկներու տուն մը, ուր մինչև հիմա պատուարած, օնուցած և քաջաւոզ զինակով իրենց ծնողներուն վերադարձուցած է 75 հայ մանուկներ, զանոնք երեք ամիսէն մինչև 2 տարի դուրսըրոտ խնամքի առարկայ ընելէ ետքը: Մանկանց Տան մէջ միշտ կայ 12էն աւելի պատիկներ, որոնք պէտք է ըլլան Փիլիքապէս տկար, և կարօտ ընտանիքի զաւակ: Հալէպի Հայ Կարմիր Ուռը, Տիկ. Քէփթըն է. Ալթունեան, Ախիոն Քրէքիէն ընկերութիւնը, Օր. Եփէն օգնած են և ոմանք տակաւին կ'օգնեն կարօտներուն: Եւ երբեմն ալ մայրերու առողջապահական եւ մանկատաժական կարճ զասախօսութիւններ կը տրուին մասնաւորապէս Տիկ. է. Ալթունեանի կողմէ: Բայց ա'լ ժամը հասած է աւելի մեթոտիկ և ընդարձակ չափով գործելու համար այս մարզին մէջ՝ ապագայ լաւագոյն ցեղի մը պատրաստութեան համար, որուն թերեւս կ'անդրադառնանք ուրիշ առթիւ:

ԱՄԷՆ ՎԵՐՋԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՍԿՋԲՆԱՌՈՐՈՒԹԻՒՆ ՄԻ

Գրեց՝ ՎԵՐ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

Տարուան վերջաւորութիւնը առհա-
սարակ տխուր կ'ազդէ մարդոց վրայ։
Այս զգացումը այլեայլ պատճառներէ
յառաջ կուգայ։ Կլիսաւորը սա է թէ ա-
հա տարի մըն ալ վերջացաւ և գուցէ
զէշ գործածեցինք զայն։ Քանզի չէ՞ որ
մարդ յաճախ կարօտով կըսպասէ օր-
ուան, շաբթուան կամ ամսուան վախ-
ճանին։ «Մառան իրիկուան շուքին կը
փափաքի և վարձկանը իր վաքճքին կը
պապսէ»։ Ինչո՞ւ մարդ այս շատ բնական
զգացումը տարուան վախճանին համար
ալ չունենայ։

Յառաջադէմաշակերտը փափաքով ու
մեծամեծ ակնկալութիւններով կը դիմա-
ւորէ ամաւերջի քննութիւններն ու մըր-
ցանակաբաշխութեան հանդէսը։ Քանզի
այն օրը ոմբոցջ տարուայ իր հաւատա-
րիմ աշխատանքին պսակումը պիտի ըլ-
լայ։ Եւ եթէ այդ իր վերջին տարին է
դպրոցին մէջ, ա'լ աւելի կ'ուրախանայ,
որովհետեւ վկայականը ստանալէ ետքը,
ազատ ու անկախ գործի սպարէզը պի-
տի նետուի։

Ամերիկեան գոլէճներուն մէջ՝ վկա-
յականներու բաշխման հանդէսին՝ փո-
խանակ մեզի պէս ամաւերջի հանդէս
ըսեալ՝ commencement (սկզբնաւո-
րութիւն) անունը կուտան, քանզի ու-
ղիդ կերպով կը խորհին թէ ուսման շըր-
ջանին վերջաւորութիւնը բուն գործնա-
կան կեանքին սկզբնաւորութիւնն է։
Դպրոցը պատրաստութեան շըջան մըն է
լոկ, ետեւէն գալիք գործունէութեան ու
արդիւնաբերութեան շըջանին համար։
Ծանօթորկը լրանայ, սկզբնաւորութիւնն
է հոլանձքի եղանակին։

Ընդհանուր կեանքի համար ալ շատ
ճշմարիտ է այս։ Կեանքի վախճանը յա-
ւիթեանակալութեան սկզբնաւորութիւնն

է։ Կ'երթանք մեր հոս ցանածը հոն հըն-
ձելու, կեանքի դպրոցին մէջ մեր քըրտ-
նաթոր աշխատութեան պտուղը հոն քա-
ղելու։ Հանդերձեալը ներկայէն կը ծնի։

Ամէն վերջաւորութիւն միանգամայն
սկզբնաւորութիւն մըն է։ Անցեալը ա-
պառնիին նախապատրաստութիւնն է։
Տարիները անընդհատ օղակաւորուած
են իրարու։ Սկսող շըջանին յատկու-
թիւնն ալ որոշողը վերջացածին ինչպէս
գործածուած ըլլալն է։ Եթէ անցեալը
գործածելու ենք օգտաւէտ ու հաւատա-
րիմ աշխատութեամբ, ապագան պիտի
ըլլայ պտղաբերութեան և վարճք ստա-
նալու ժամանակ մը։ Կիմա արցունքնե-
րով մեր ցանածներէն ուրախութեան ա-
ռատ հունձք մը պիտի հնձենք։ Իսկ եթէ
անցեալը վատներ ենք ծուլութեամբ ու
անհոգութեամբ, հարկաւ ապագան ալ
պիտի ըլլայ յուսախաբութեան ու ապա-
շաւի ժամանակ մը, ասկէ տարբեր ար-
դիւնք մը ակնկալել անխելքութիւն կը
ըլլար։

Այսպէս, վերջացող ժամանակի ամէն
բաժանում սանդուղի աստիճան մըն է
զմեզ քայլ առ քայլ և շարունակ կա'մ
դէպի վեր կա'մ դէպի վար տանող։ Իսկ
բուն պահանջուածը սա է որ ամէն մէկ
շըջանի վերջաւորութիւնը աւելի լայն
կեանքի մը սկզբնաւորութիւնը կազմէ
մեզի համար։

Աստուծոյ գործունէութեան մէջ կը
տեսնենք շարունակութիւն մը, որ մի-
անգամայն անդադար յառաջդիմութիւն
մըն է, միշտ դէպի բարձրագոյնը և կա-
տարեալը շարժում մը։ Սուրբ Գրքի վը-
կայութիւնն ու նաև բնական գիտու-
թեան յայտնածը այս է։ Երկրաբանական
ամէն դարաշրջանի վախճանը սկզբնաւո-
րութիւնն է եղած նոր դարաշրջանի մը։

ուր բուսական և կենդանական կեանքը կրցած է առաջուանէն միշտ աւելի բարձր ու կատարելագործեալ ձեւերով ինքզինք արտայայտել:

Մարդկային էակին համար ալ սահմանուած ծրագիրը միեւնոյնն է: Մեզմէ կ'ազնկալուի այսօրը երէկունէ աւելի աղէկ և վաղուան օրն ալ այսօրէն աւելի աղէկ ընել: Մեզք որ ազգեր ու անհատներ յաճախ այս կանոնէն կը վերաբերին, և անոր դառն հետեւանքն ալ կը կրեն:

սակայն Քրիստոսի Աւետարանը ճակատագրականութեան պատգամը չէ: անկէ բարձր պատգամ մ'ունի հաղորդելու, — թողութեան ու փրկութեան պատգամը: Աստուած թողութիւն ալ ունի մեր անցեալի թերացումներուն համար՝ մանաւանդ անոնց որ ապագան աւելի լաւ ընելու հաստատ օրոշում կուտան: Աստուած կարող է իր անհուն շնորհքով մեր օգուտին համար զործածելու մինչև անգամ մեր անցեալի սխալները, զանոնք միջոց ընելով մեր խրատուելուն ու դաստիարակութեան: Ուստի եթէ դժբախտաբար թերացած ենք անցեալին մէջ և մեր վերջացող տարին չարաչար գործածած, նորէն պէտք չէ որ յուսահատ մտքով մը մտնենք նոր տարին: Ձմեռը, որ բոյսերու և յոյսերու խամրելը կ'երևի մեզի, իսկապէս պատրաստութիւնն ու

երաշխիքն է նոր գարուններու, նոր ծրուած — փթումներու, նոր հունձքի և այգեկութքի: Աստուած, որ նոր տարուան մը սկիզբը մեզ հասցուցած է, ասով իսկ կը ցուցնէ թէ ո'րչափ բարերար է, քանզի անա նոր պատեհութիւն մը կը բանայ մեր առջև: Խորհրդաւոր չէ՞ հին տարուան վախճանին հետ աշխարհի փրկչին ծննդեան զուգադիպումը: Ուրեմն վերջացող տարուան մէջ մեր գործած յանցանքներուն ու զանցառութիւններուն համար ճշմարիտ ապաշխարութեամբ տրտմելով հանգերձ, դիմենք մեր երկնաւոր Հօր զթութեան ու ներումին, և նոր տարուայ առաջին իսկ օրէն սկսինք նոր և առջիններէն տարբեր ու լաւագոյն կեանք մը ապրելու՝ իր Սր. Հոգւոյն ապաւինելով:

Նոր սկզբնաւորութիւն մ'ընենք: Աղօթքի եօթնեակին պատեհութիւնը լաւագոյնս զործածենք. թող օրհնութեան շարքով մ'ըլլայ ան բոլոր մեր եկեղեցիներուն: Հայ — Աւետարանականութեան պատմութեան մէջ ասոր օրինակները բազմաթիւ են. տարեգլուխի աղօթքի եօթնեակը քանի՞ քանի անգամներ իրական ու տեւական հոգեօր արթնութեանց սկզբնաւորութիւնն եղած է. ինչո՞ւ այս անգամ ալ նոյնը չկրկնուի: Ուստի հաւատքով ու յոյսով կոխենք նոր տարուայ սեմէն ներս:

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

7.

ՀՕՐԸ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼԸ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՃՇՄԱՐԻՏ ԿԵՐԱԿՈՒՐՆ Է

Թրգմ. Բ. ԺԱՄԱԿՈՉԵԱՆ

Գրեց՝ Վ. ՉԷՐԹՔՈՎ

Յիսուս իր վարդապետութիւններուն ճշմարտութիւնը փաստելու համար՝ Հըրեաներուն պատասխանելով՝ ըսաւ. «Իմ վարդապետութեանս ճշմարտութիւնը

ապացուցուած է անով, որ ես ո'չ թէ իմ անձնական անուանովս այլ ամէնուս Հօրը անունով կը սորվեցնեմ, ես կ'ուսուցանեմ այն, որ ամէնուն Հօրը աչքին

հաճոյ է և ուստի մարդոց՝ լաւ։ Ընէ՛ իմ վարդապետածին համաձայն, պահէ հինգ պատուիրանները և պիտի տեսնես թէ ճշմարտութիւնն է որ կը սորվեցնեմ։ Այն հինգ պատուիրաններու կատարումը չարիքը պիտի բառնայ աշխարհէն, ատոր համար անոնք ուղիղ և ճշմարիտ են։ Ով որ զինք զրկող Աստուծոյ կամքը կը սորվեցնէ և ոչ թէ իր անձնական կամքը, անիկա ճշմարիտ է։ Մովսիսականութիւնը մարդկային կամքի կատարումին մղելով հակասութիւններու կը յանգի, բայց իմ ուսուցումս **ՀՕՐԸ** կամքին կատարումն է, ուստի բոլորովին համաձայն է Անոր։»

Հրեաները չհասկնալով Յիսուսը, սկսան արտաքին ապացոյցներ փնտրել, ստուգելու համար՝ թէ մարգարէացուած Քրիստոսը իրաւամբ ի՞նքն էր։ Ասոր վրայ ըսաւ. «Մի՛ հարցնէք իմ ո՛վ ըլլալս, սոսկ ստուգելու համար թէ մարգարէութիւնները ի՞մ մասին է որ խօսած են թէ ուրիշի մը, հապա ունկընդրեցէք իմ վարդապետութեանս, որ Հօրը անունով ձեզի կը սորվեցնեմ։ Անհրաժեշտ չէ՛ ձեւականութեան ետեւէ իյնալ և իմ ով ըլլալս հասկնալ, այլ պէտք է հետեւիլ իմ վարդապետութեանս, որուն հետեւողը պիտի ստանայ ճշմարիտ կեանքը։ Իմ վարդապետութեանս համար փաստեր չկան, ինչպէս կարելի չէ լոյսը լուսաւորել նոյնպէս կարելի չէ ճշմարտութեան ճշմարիտ ըլլալը փաստել։ Իմ վարդապետութիւնըս լոյս է. ան որ կը տեսնէ՝ լոյս և կեանք ունի և ապացոյցներու պէտք չ'ունենար։ Ով որ խաւարին մէջ է պէտք է լոյսին գայ։»

Հրեաները նորէն հարցուցին թէ, «Ո՞վ ես դուն իբր Ֆրիլքական անձնաւորութիւն»։ Ան ըսաւ. «Ես կեանքի Հօրը որդին եմ։ Ահա ճշմարտութիւնը, որ կը սորվեցնեմ։ Ան որ ինքզինք ինձ պէս

կը նկատէ իբր Հօրը որդին և կ'ուզէ հասարակաց Հօրը կամքը կատարել, կը դադրի գերի ըլլալէ և կը դառնայ ազատ մարդ։ Մենք ապականութեան միջոցով գերի ենք, մինչ Ֆրիլքական կեանքը մեր այս վիճակը իրական կեանք կը համարէ։ Ըշմարտութիւնը հասկնալ ուղիղ մը պէտք է գիտնայ թէ կեանքը կը կայանայ մի միայն Հօրը կամքը կատարելուն մէջ։ Միայն Հօրը կամքը կատարողը կրնայ ազատ և անմահ ըլլալ։ Ինչպէս ծառայ մը չի կրնար իր տիրոջ տունը մնալ շարունակ, բայց որդին կը մնայ, նոյնպէս ալ ան որ մարմինն գերի է չի կրնար յաւիտենական կեանքը մը տնել, բայց հոգիով Հօրը կամքը կատարողը յաւիտենական կեանքի սահմանուած է։ Ձիւ հասկնալու համար պէտք է գիտնաք թէ՛ իմ Հայրս ձեր Աստուծոյն նման չէ, բայց իմ Հայրս կեանքի հոգին է։ Ձեր Աստուածը, ձեր Հայրը վրէժխնդիր Աստուած է, մարդիկ կը զլխատէ, բայց իմ Հայրս կեանք կուտայ։ Ասոր համար մենք տարբեր հայրերու զաւակներ ենք։»

«Ես ճշմարտութեան կը հետեւիմ և դուք կ'ուզէք զիս սպաննել, ձեր Աստուածը հաճեցնելու համար։ Ձեր աստուածը սատանան է, չարիքի աղբիւրը, անոր ծառայելով, սատանային ծառայած կ'ըլլաք։ Բայց ես կը վարդապետեմ թէ, մենք կեանքի Հօրը զաւակներն ենք և թէ ով որ իմ վարդապետութեանըս հաւատայ մահ պիտի չտեսնէ։»

Հրեաները հարցուցին. «Ինչպէ՞ս կրնայ մէկը չմեռնիլ. քանի որ Աստուծոյ ամենահաճոյ մարդը՝ Արարհամի իսկ մեռաւ։ Ինչպէ՞ս կրնաս ըսել թէ քու վարդապետութեանդ հաւատացողները չպիտի մեռնին»։ Յիսուս ըսաւ. «Իմ անձնական իշխանութենէս չեմ խօսիր, այլ միակ աղբիւրէն, որ Աստուած կը կոչուի և որ մարդոց մէջ է։ Այս աղբիւրը ճանչնամ, բայց չեմ կրնար ճանչցը-

նեւ. ես գիտեմ իր կամքը և կը կատարեմ զայն: Կեանքի այդ աղբււրին համար կ'ըսեմ. Ան էր, է, և պիտի ըլլայ, քանի որ անմահ է:»

Յիսուսի վարդապետութեան համար փաստի պահանջը կը նմանի պահանջի մը, որ կ'ուղղուի ատենօք կոյր եզոզ մարդու մը, հասկնալու համար թէ ինչո՞ւ և ինչպէ՞ս լոյսը կը տեսնէ: Կոյրը որուն տեսողութիւն պարզեւում էր, թէ և հին մարդն էր, միայն կրցաւ ըսել. «Կոյր էի և կը տեսնեմ»: Ճիշտ այսպէս կրնայ պատասխանել այն, որ նախապէս կեանքին նշանակութիւնը չէր հասկցած ու հիմայ կը հասկնայ: Ան կրնայ ըսել. «Առջ կեանքին ճշմարիտ բարիքը չէի հասկնար, բայց հիմա գիտեմ»: ժամանակին կոյր եզոզին եթէ ըսուի. «Դուն օրէնքին համաձայն բժշկուած չես, կամ քեզ բժշկողը չարագործ մ'է, կամ ուրիշ ձեռով պէտք էր որ բժշկուէիր», անշուշտ հեռեւեալը կրնայ պատասխանել. «Բժշկութեան» ձեռ օրէնքին կը համաձայնի՞, կամ բժշկողը յանցաւոր է, այս մասին բան մը չեմ գիտեր, միայն սա գիտեմ թէ կոյր էի ու կը տեսնեմ»: Ով որ այս վարդապետութիւնը կը հասկնայ, կ'ըմբռնէ թէ ճշմարիտ բարին հօրը կամքը կատարելն է. վարդապետութեան կանոնաւորութեան կամ աւելի բան մը չահելու կարելիութեան մասին բան մը չի կրնար ըսել, այլ պէտք է ըսէ. «Նախապէս կեանքին նշանակութիւնը չէի գիտեր, հիմայ գիտեմ: Աւելին չեմ գիտեր»:»

Յիսուս ըսաւ. «Իմ վարդապետութիւնս կեանքին զարթնումն է, որ այնքան ատեն քնացաւ: Ան՝ որ կ'ուզէ հաւատալ և կը հաւատայ իմ վարդապետութեան»՝ յաւիտենական կեանքին մէջ պիտի արթննայ և մնալէն վերջ պիտի շարունակէ ապրիլ: Իմ վարդապետութիւնըս ունէ ձեռով չի փաստուիր, բայց մարդիկ ինքզինքնին սալու են անոր, քան

զի միայն ան խոստացած է յաւիտենական կեանք տալ հաւատացողներուն»:

«Ոչխարները հովիւին կը հետեին, քանզի կերակուր և կեանք կուտայ: Ինչպէս որ ոչխարները փարախին պատէն մագլցող աւազակին չեն հետեիր, այլ կը փախչին անկէ, նոյնպէս մարդիկ պէտք է մերժեն այն վարդապետութիւնները, որ կը սորվեցնեն բռնութիւն և մահացում»:

«Իմ վարդապետութիւնս ոչխարներուն համար զուռ մըն է և ով որ անկէ մտնէ ճշմարիտ կեանքը պիտի գտնէ: Ինչպէս որ բարի հովիւները կը ճանչնան ու կը սիրեն իրենց ոչխարները և նոյնիսկ կեանքերնին կը զոհեն անոնց, մինչ վարձկանները չեն սիրեր, այնպէս ալ միայն այն ուսուցիչը ճշմարիտ է, որ ինքն իրեն չի նայիր, իր մասին չի մտածեր, իսկ ան որ միմիայն իր վրայ կը գուրգուրայ, պէշ ուսուցիչ մ'է: Իմ վարդապետութիւնս է, թէ մարդ ինքն իր վրայ մտածելու չէ, հապա ֆիզիքական կեանքը զոհելու է հոգեկանին: Աս կը վարդապետեմ և կը կատարեմ»:

Տոկաւին Հրեաները չհասկցան և կը յամառէին փաստեր ուղեւոր գիտնալու համար թէ ան Քրիստոսն էր՝ թէ ոչ՝ Ուստի ըսին. «Մեզ մի՛ չարչարեր, այլ յայտնապէս ըսէ. դուն Քրիստոսն ես»: Յիսուս պատասխանեց. «Ո՛ր թէ խօսքերու, այլ գործքերու հաւատ ընծայեցէք: Այն գործերէս, որ ձեզ կը սովորեցնեմ, կրնաք հասկնալ թէ, իմ սուսուցումս ճշմարիտ է, թէ ոչ: Ըրէ՛ք, ինչ որ ես կ'ընեմ ու խօսքերով մի՛ զբաղիք: Հօրը կամքը կատարեցէք և այն ատեն դուք պիտի միանաք ինծի և Հօրը հետ: Ես որդի մարդոյ եմ եւ մէկ՝ Աստուծոյ հետ: Ես այն եմ, որ դուք Աստուած կը կոչէք և ես Հայր կը կոչեմ: Աստուած եւ ես մէկ ենք: Եթէ ես Հօրը կամքը կը կատարեմ, ուրիշն ես Հօրը մէջ եմ, եւ Հայրը իմ մէջս»:

ԱՂԵՂՆ ՈՒ ԵՐԳԸ

Յ. Վ. Է. Մարթայեան, Կ. Պոլսոյ հետեւեալ զեղեցիկ ստանաւորը թարգ-
Հայ Աւետ. համայնքէն երիտասարդ մը, մանկեղծ իրր յիշատակ կը յանձնէ իր
մինչ Մեծ Պատերազմի միջոցին Թուրք մէկ բարեկամին, որ բարի եղաւ զայն
Բանակին մէջ կը ծառայէր Տիգրանա- մեզի արամագրել հրատարակութեան
կերտի մէջ, 1916ին Հ. Ու. Լօնկֆելտյի համար: Ծն. Խմբ.

Լարըս քաշեցի հս օգին մէջ ջինջ մաքուր,
Աղեղն ինկաւ գետին բայց չեմ գիտեր թէ ո՛ւր,
Այնքան արագ թռաւ զնայց նա սրարչաւ
Որ ակնարկըս անոր հետեւիլ չըկրցաւ:

Երգ մը երգեցի հս օգին մէջ ջինջ մաքուր,
Երգն ալ ինկաւ գետին բայց չեմ գիտեր թէ ո՛ւր,
Քանզի ո՞ր աչքը կայ զօրաւոր և ուժգին
Որ կրնայ հետեւիլ երգի մը թըռիչքին:

Շատ շատ տարիներ վերջ ծառին մէջ դարաւոր,
Գըտայ հս աղեղըս զեռ չըկտորած ու նոր.
Ու ան երգած երգս ալ սկիզբէն մինչև վերջ
Գըտայ դարձեալ պահուած բարեկամ սըրտի մէջ:

ԾՆՈՒՆԴԻ ՎԱՐԴԸ

(ԱԻԱՆԴԱՎԷՊ)

Շատ ու շատ տարիներ առաջ վար-
դենիները ժողով մը գումարեցին որո-
շելու համար թէ, տարւոյն ո՛ր եղանա-
կին կամ ժամանակին մէջ բացուիլ լա-
ւագոյն պիտի ըլլար իրենց համար:
Ժողովին եկած էին հեռուէն ու մօտէն
ամէն տեսակէ ու ամէն գոյնէ զանազան
ու զարմանազեղ ծաղիկներ ունեցող
վարդի թուփեր, որոնք՝ զրեթէ ամէնքն
ալ՝ լաւագոյն համարեցին Յունիս ամ-
սուան մէջ բացուիլ, բացի հտեի կողմը
գտնուող վարդենիէ մը՝ որ նախապա-
տիւ սեպեց ծաղկիլ ամրան վերջերը կամ
աշնան սկիզբները: Սակայն շատերը
ձայն բարձրացնելով գոչեցին. «Յունիս-
սը կուզենք, Յունիսը» և փաստարկե-
ցին սապէս. «Յունիսը ամիսներովն ա-
մէնէն գեղեցիկն է, վարդն ալ անշուշտ

ծաղիկներուն ամէնէն գեղանին է. հե-
տեաբար ծաղիկն ու ամիսը իրարու հետ
սերտիւ կապուած են»:

Սակայն զեռ կը մնար ամէնէն հե-
ռուն պատիկ, աննշան թուփ մը որուն
տերեւներն անգամ ծլած չէին. անիկա
երևոյթով վարդենիի կը նմանէր, բայց
այնքա՛ն պղտիկ, այնքա՛ն ճղճիմ թփիկ
մըն էր որուն վարդենի մ'ըլլալն իսկ
յայտնի չէր: Խրոխտ ծաղիկները ա՛յ
միայն պէտք եղածին չափ ուշադրու-
թիւն չընծայեցին իրեն՝ հապա ամենա-
փոքրիկ կարեւորութիւն անգամ չտուին:
Ժողովին մէջ իրեն կարծիքը հարցնող
մը չեղաւ. և այս կերպով անիկա լուռ
մնաց ժողովին ամբողջ տեղողութեանը
միջոցին: Խեղճ վարդը ունէր անշուշտ
իր մտքին մէջ իր անձնական գեղեցիկ

խորհուրդներն ու գաղափարները, որոնք, եթէ հարկ ըլլար, այս կերպով կրնային արտայայտուիլ. «Որքան սխալ բան է որ բոլոր վարդերնինքը կ'ուզեն ծաղկիլ այնպիսի ժամանակ մը երբ աշխարհը առանց անոնց արդէն հիւանալի կերպով գեղապարտյր է: Շիտակը ես կ'ուզէի վարդեր ունենալ այն տանն երբ բնութեան մէջ ամէն ինչ տխրազին երեւոյթ մը ունի, որպէս զի ես իմ վարդերովս ուրախութիւն ու գեղեցկութիւն սփռէի: Կ'ուզեմ ցուրտ ձմեռուան մէջ բացուիլ, արգեօք կրնամ»: Պզտիկ վարդի թուփը չէր գիտեր տակաւին թէ բարի և ազնիւ նպատակի մը մէջ որքան մեծ ոյժ մը թագնուած էր:

Տարին սրարչաւ վազեց իր ընթացքը աւարտելու. վարդերը ճիշդ որոշեալ ժամանակին ծաղկելով՝ իրենց ըզմայելի գեղեցկութեամբը վարդաբոյսին հրկիրը. ու յետոյ ամէնքը, ամէնքը թառամեցան. իրենց բոյրէն ու թոյրէն հետք մ'ալ չմնաց... Սաստիկ ձմեռ է. սպիտակափայլ ձիւնը գետինն վրայ տարածուեցաւ թանձրահոծ, այնպէս որ մարդիկ իրարու ըսին. «Այս որքան ձիւն, տարիներէ ի վեր երբեք այսքան ձիւն տեղացած չէր»: Վերջապէս հասաւ Մընուգի Օրը, երբ գեղատի օրիորդ մը այս երկրէն կը մեկնէր անշուշտ ու կ'երթար բնակակից ըլլալու Անոր հետ, որ ժամանակաւ Գրիստոս Մանուկ կոչուած էր: Յուղարկաւորներէն մին վշտազին ձայնով մը ըսաւ. «Ո՛հ, որքան տխուր բան է առանց ծաղիկի մեկնիլ այնպիսի մէկու մը համար որ ծաղիկներու սիրահար մըն էր»: Իսկ ուրիշ մէկը ցաւակցօրէն աղաղակեց. «Մա պարտէզին հեռաւոր մէկ անկիւնը թփիկ մը կայ, որ վարդեր ունի ձիւնին թանձր խաւին ներքեւ թաղուած»: »

Մարդիկ գործի սկսան, փորեցին ու մէկդի նետեցին ձիւնակոյտը այն վըտտահութեամբ թէ անոր տակ թաղուած

քաջագնիւ վարդի թուփը գեղազմայլ ծաղիկներ ունէր: Արդարեւ այն իր լաւագոյնը ըրած էր, հակառակ բնութեան սաստկութեանց իր պործը շարունակած էր անյողգող, և հիմա ունէր կարմրուկ երկններով բազմաթիւ ճերմակ վարդեր, որոնք ծաղիկներու սիրահար բարեկամի մը պէտք եղածէն շատ աւելի էին:

Այս ուրախառիթ օրը մօտիկ տան մը մէջ աշխարհ եկած էր մանկիկ մը, որուն մայրիկը պէտք ունէր ծաղկեփունջի մը, դնելու համար զայն նորածինին քնքուշ բարձիկին քովիկը, որպէսզի արթննալուն պէս բարեկալուստ մաղթէր անոր:

Դարձեալ նոյն օրը ուրիշ տան մը մէջ, հարսանիկան հանգէս մը տեղի կ'ունենար հարսին շքեղ սեղանը պճնազարդուած էր այս սքանչելի ձմրան վարդերով որոնց վրայ գրուատիքներ շռայլեցին հանդիսականները, և հարսը սրտովին կը հրճուէր խորհելով թէ անոնք բացուած էին իրեն հարսանեկան հանգէսը փառաւորելու համար: Ո՛հ, որքան երջանիկ էր վարդի թուփը, որովհետեւ ան էր կեանքի ամենատեղեկան ու կարեւոր պարագաներուն գեղեցկութիւն ու ուրախութիւն տուողը:

Բայց վարդին համար աւելի բարեբաւտիկ բան մը պատահեցաւ. պարտէզին Տէրը որ ամէն բան լաւ հասկցած էր սրտագեղումով ըսաւ. «Քանի որ այս պզտիկ թուփը աճեցաւ ու ծաղկեցաւ աննշմար եւ անփառունակ, եւ զոհունակ սրտով սպասեց ու բերաւ իր չնչին պարգեւը լոկուրիչները երջանկացնելու համար, եւ երբ պակսեցան անոնք անիկա սիրայօժար օգտակար ըլլալու պատրաստ դանուեցաւ, այսուհետեւ իմ անուանո համար անիկա պիտի կոչուի ՅՆՈՒՆԴԻ ՎԱՐԴ»:

Թարգմ.

Յ. Ն.

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՆՂՈՒԾԵԼԻ ՏԱՍԸ ՀԱՆՆԵՂՈՒԿՆԵՐԸ

(Շար. և Վերջ)

Գրեց՝ ՏՈԳԹ. Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

7. ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Որքան ալ անսահման և ահարկու է նախընթաց ուսումնասիրուած մեր տիեզերքի խորհրդաւոր գաղտնիքները, նոյնքան ոչինչ և աննշան կը մնան ընդհանուր տիեզերքի առջև, որուն գաղափարը մտքերնուս մէջ ամփոփել անկարելի է: Աստղաբաշխներ մեզ կ'իմացնեն թէ ծիրկաթին մեզմէ մէկ եռիլիոն միլիոն հեռու է, որուն լոյսը մէկ միլիոն տարի առաջ ճամբայ ելած է մեզ հասնելու համար: Ո՛ւրտեղ է ուրեմն ստեղծագործութեան սահմանը տիեզերքի մէջ, արդեօ՞ք ծիրէ ծիր պիտի երկարի—մինչև յաւիտենականութիւն, անսահման անջրպետի անթափանցելի խորութեանց մէջ: Այս է ամենախորհրդաւոր կէտը, թերևս 200 մատնաչափ հեռագիտակը նոր լոյս և տիեզերքներ ցոյց տայ մեզ՝ հանգուցուած անսահման ծիրկաթիններով և կամ պիտի ունենանք աւելի խոշոր հեռագիտակներ, որոշ գաղափար մը կազմելու համար ստեղծագործութեան մասին:

8—ԵՐԿՆԻՑ ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐԸ

Հարվըրտի մէջ՝ եզակի, երկաթախառն քարի կտոր մը կայ, հնագոյն աստղաբաշխարհի վրայ, որ հարիւր հազար միլիոն տարիէ աւելի հին է, ուրիշ խոսքով մեր երկրագունդէն յիսուն անգամ աւելի հին է:

Դար մը առաջ գրեթէ չէին հաւատար թէ՛ աստղային կ'այցելեն մեր երկրագունդը: Ամէնօր մօտաւորապէս 1,000,000,000 աստղային կը գարնուին մեր երկրագունդին: Ո՛ւրկից կուգան ասոնք: Արդեօք մոլորակներէն փրթած կտորներ են ասոնք, թէ ոչ անջրպետի

մէջ ազատ արձակուած հիւլէի ելեկտրոններու արտադրութիւններ են: Ի՞նչ է անոնց վերաբերումը մոլորակներու հանդէպ: Ի՞նչ է աստղային ուրակոծման արդիւնքը լուսնի վրայ: Ի՞նչ կը սորվեցնեն մեզ երկիր մոլորակի և արեգակնային գրութեան մասին: Երանի թէ այդ Հարվըրտ Գոլէճի քարը լեզու ելլէր և խօսէր մեր արդի գիտուններուն, բայց լուռ ու մունջ կը ծիծաղի մեր տգիտութեան վրայ: Հարիւր տարուան հետազոտութիւնները դեռ շատ քիչ բան սորվեցուցին մեզ աստղային երկաթափաթի մասին: Աստղային իրենց մէջ գոյուած կը պահեն տիեզերքի ստեղծագործութեան հանելուկին ոսկի բանալին:

9—ՄԻՋՈՑԻ ԳԱՂՏՆԻՐԸ

Մեզի տեսանելի տիեզերքը կը պարունակէ անհամար բայց մօտաւորապէս համրելի շարժուն երկնային մարմիններ, միգամածներ, աստղեր, լուսիններ, գիսաւորներ և աստղային, ասոր հետ մէկտեղ երկինք կրկին խճողուած չ'երևնալ, դեռ աներեւակայելիօրէն անսահման անջրպետ մը կը մնայ բացարձակապէս մեզի անծանօթ: Միջոցը ահաւելի պարագութիւն մը ունի, անոր պարունակած նիւթի համեմատութիւնն է՝ մէկ հիւլէին իւրաքանչիւր քառակուսի մաս միջոցի մէջ:

Ի՞նչ է գաղտնիքը այս ահարկու պարագութեան: Հսկայ միտքեր կ'զբաղին այս խորհրդաւոր հանելուկով, նոյն իսկ Այնշթայն: Յարգ ոչինչ կրնայ ըսուիլ միջոցի նկատմամբ գոհացուցիչ կերպով: Փոխանակ նկատելու միջոցը որպէս պարագութիւն և կամ նիւթով լեցուն, կարծեմ կը մօտենանք ճշմարտութեան երբ

Այնչթայնի պէս մտածենք—այսինքն աշխարհ մը որ լիցունութենէ կ'երկարի դեպի անսահման պարապութիւն:

10—ՍԿԻՉԲԸ

Գաղտնիքներու ամենադիւրինն է ատեներորդը: Այս գրադիցուցած է թեւեւ առաջին մարդէն սկսեալ երբ խորհելու չափ միտք մը ունեցած էր: Ուրկի՞ց ծագում առին տիեզերքը, միգամածները, շողողուն աստղերը, վիթխարի արեգակները, մարդը և բոյսերը, ծաղիկները—ուրկի՞ց ծնունդ առին ասոնց բոլորը: Ի՞նչ է բոլոր ասոնց վախճանը: Ուրկի՞ց է այս ոյժերուն կեդրոնը, այդ կեանքը որ կը կառավարէ տիեզերքը:

Աստղ, արեւ և հսկայ միգամածներու գաղտնիքները, ահարկու ժամանակի և միջոցի խանձարուրին մէջ փաթթուած են: Թեւեր առած մարդս թռչի իսկ միջոցին մէջ և իջնէ ծովերու և երկրի յատակները թերեւս կրկին անկարող ըլլայ հասկնալու անցեալը — ստեղծագործութեան գաղտնիքը:

Վերջի տեսութիւնը և մարդու մարմնոյն կազմի քիմիաբանական վերլուծումը հաստատեցին թէ՛ մարդը, կենդանին, ապառաժը, աստղը, լուսինը, ամէնքն ալ նիւթի համանման բաղադրութիւններէ կազմուած են: Ժամանակի և միջոցի մէջ վաղանցիկ, և այնքան փոքրիկ է իրականութեան մէջ մտրդո, որուն քիմիաբանական բաղադրութիւնը նոյնն է ինչ որ է երկիրը կազմող նիւթը—անջրպետին մէջ աստղ և կրակի գունտերը և կազային աշխարհները—մարդս ասոնցմէ դուրս տարաշխարհիկ կամաստվոր վիճակ մը չի կազմեր: Մենք ստեղծագործութեան հըսկայ աշխարհին և աստղերուն մշտնջենական գոյութեան մէկ մասը կը կազմենք, ասկէ աւելի անմահ, ասկէ աւելի մշտնջենական—ինչպէս կ'երեւնայ—ի՞նչ կըրնայ բաղձալ Ստեղծողէն սա տկար մարդը քան այն անկորնչելի և մշտնջենական երկնային անմահ աստղերը:

ԻՆՉՊԷՍ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ Է ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻՆ

ՊԱՇՏԱՄՈՒՆԻԲԸ

Գ.

Դրեց՝ ՊԱՏ. Կ. ՖԱՐԱՃԵԱՆ


ԻՆՉՊԷՍ ՍԿՍԵԼՈՒ Է—

Ասոր առաջին պայմանը բոլոր պաշտօնեաներու ներկայութիւնն է: Պէտք է ճիշդ որոշուած ժամուն, առանց նշկատի առնելու բացակայները, դաշնակի վրայ լռիկ և գողտրիկ եղանակով մը սկսիլ: Ասոր պէտք է յաջորդէ լուրջ և բարեպաշտական հոգիով երգ մը կամ կարճ աղօթք մը:

ԱՂՕԹՔՆԵՐԸ: Պէտք է աղօթքի համար նախապատրաստել, վասնզի անոնք պիտի չաղօթեն առանց անոր պէտքը զգալու: Կարճ բացատրութիւնով մը՝ իրենց սրտերուն մէջ փա-


փաք արթնցնելով միտքերը կը պատրաստուին, և ապա, կը մատուցուի աղօթքը որ օրուան նիւթերը պէտքէ շօշափէ: Երկայն և քանի մը նիւթերու շուրջ աղօթելու տեղ կարճ և տարրեր պահերուն միայն մէկ գլխաւոր նիւթի շուրջ աղօթել աւելի յարմար է: Առաջնորդը՝ մանկանց հետաքրքրութիւնը և անոնց լեզուն նկատի առնելով՝ պարզ և թանձրացեալ աղօթելու է:

Առաջնորդը՝ ծնողատէր և ծնողազուրկ, եկեղեցի և դպրոց ունեցող և չունեցող մանուկներու միջև հղած









տարբերութիւնը կը բացատրէ, և ապա կը թելադրէ որ շնորհակալութեան լուռ աղօթքներ մատուցուին, որմէ հոգը կրտսերսպոյն աշակերտներէն մէկուն կողմէ աղօթք մը մատուցուի որուն ահաւասիկ մէկ նմոյշը:

«Ո՛վ մեր պթասիրտ Հայրը, շնորհակալ ենք Բեզմէ որ Բու զաւակներդ ենք և հոս ծնողք ալ ունինք, որոնք մեր ամէն տեսակ պէտքերը կը հոգան: Շնորհակալ ենք Բեզմէ մեր եկեղեցիին և դպրոցին համար: Նաև շնորհակալ ենք որ մենք կ'ապրինք վայելելով պատշտներ, տեսնելով ծաղկաւառներ, պարտէզներ: Ո՛վ հայր, տուր որ կարող ըլլանք հաուկնալու, թէ այս բոլորէն զուրկ չաւ մը մանուկներ կան և կարենանք զանոնք ալ մասնակից ընել մեր վայելած օրհնութիւններուն որպէսզի օրէ օր մեծնանք Յիսուսի նմանելով»:

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ: Երգեցողութիւնը յոյժ մըն է. նամանաւանդ երբ ան միացած է երաժշտութեան: Ան իր զօրութեան բարձրագոյն աստիճանին հասած է պաշտամունքին մէջ: սերտօրէն կապակցութիւն ունին այս երկուքը: Այն չըջաններուն միջոցին երբ կրօնքը բարգաւաճեր է, մարդիկ շատ երգեր են: Առանց ասոր պաշտամունքը թերի երկացած է: Զափահասներու համար զործածուած երգերը Մանկանց կ. Դպրոցի մէջ գործածել միևնոյն արդիւնքը յառաջ չի բերեր: Երգերը մանկանց տարիքին և առօրեայ կեանքին հոգեւոր մակարդակին համապատասխանելու են: Երգերուն խօսքերը պէտք է կրօնական տեսակէտով գրական արժէք և կեանքի համար ճշմարիտ կապակցութիւն ունենան:

Բարձրաձայն երգելը յարգանքի հոգին կը տկարացնէ: Նախնըտրելի է օրուան և դասի յարմարող երգերը ընտրելով, մեղմ, աւելի մեծարանքով երգել:

Խմբերգի յաջողութիւնը առաջնորդէն կախեալ է: Անիկա երաժշտական ձիրք և հմտութիւն ունենալով հանգերձ պէտք է ունենայ քրիստոնէական նկարագիր և պէտք է գիտնայ թէ պաշտամունքի միջոցին հոգեբանական բոլոր կանոնները, մանուկներու բնագոյները և կարողութիւնները կը գործեն ի նպաստ կամ ի վնաս պաշտամունքին:

Ուրչափ բախտաւոր է այն կիրակնօրեայ Դպրոցը որ ունի իր սեպհական սըրահին մէջ տեղաւորուած զեղեցիկ դաշնակ կամ երգեհոն մը: Ծշտապահ, ճարպիկ և հմուտ դաշնակահար մը՝ որ իր երաժշտական մասնաւոր տաղանդով միատեղ ունի նաև կրօնական զգացում՝ երգերուն մէջ պաշտամունքի հոգին կը յուսցարէ: Պատրաստ միտքով, քնքուշ և ճարտար մատները ստեղծաշարին վերայ խաղցնելով կ'սկսի իր նախաբանին ճիշտ ժամանակին և պոսպէս ներկաներու սրտի քնարին նուրբ թելերը կը թրթռացնէ և անմիջապէս կը պատրաստէ զանոնք պաշտամունքին ու կ'ստեղծէ այդ հոգեւոր մթնոլորտը:

Երբ հմուտ դաշնակահարը այսպէս կարող ըլլայ նուագելու երգերը ժամանակին, խանդով և զգացումով, և երբ երգի հոգին դաշնակի ձայնին միջ յայտնուի, մանուկներու փափաքները կ'արթննան և անոնք պատրաստ կ'ըլլան պաշտամունքի զգացումով երգելու:

ՆԱՄԱԿ

ՎԵՐ. Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆԻ Ֆրէզնոյէ գրած Նոյ. 18 թուակիր մէկ նամակը ստացանք զոր կը հրատարակենք Նոյնութեամբ:

Սիրելի Նոր Աւետաբեր,—

Տասնեւինը օր տեւող ծովագնացութենէ մը հոգքը Սիպտեմբեր 8 երկու-

չաբթի առտու ողջ առողջ Նիւ Եօրք հասայ: Ամսուան մնացեալ շաբաթները նուիրեցի ազգականներու և բարեկամներու այցելութեան և հայ եկեղեցիներու մէջ և ուրիշ ժողովուրդներու քարոզելու և խօսելու. իսկ Հոկտեմբեր ամիսը ամբողջ յատկացուցի Ամերիկեան Պորտին և Մէսս. Հօմ Միչինէրի Սօսայթիթիին ընտրած եկեղեցիներուն և ժողովուրդներուն. ասոնք ամէնը Արեւելեան Նահանգներուն մէջ: Ժամադրութեանց կարեւորագոյնը Ամերիկեան Պորտին 121րդ տարեկան ժողովն էր որ գումարուեցաւ Ուիսկանսին Նահանգին մայրաքաղաքը Մէտիսընի մէջ Նոյեմբեր 21-23 ին, որ փրկկրամին մէջ տեղ տուաւ Հայ Մնացորդին պատմութեան: Ճամբուն վրայ այցելեցի երկու Հայ Աւետարանական եկեղեցիներու, — Տիթրոյթ՝ ուր հովիւ է այսօր Ե. Ռչաունի և Շիգակօ՝ զոր կը հովուէ Պատ. Հ. Աչճեան: Իսկական հոգեւոր արտօնութիւն մըն էր դարձեալ տեսակցիլ Արեւելեան և Միջին Նահանգներու հայ եկեղեցիներուն հետ, և կը կարծեմ որ իրենք ալ փոխադարձաբար կազդուրուեցան հեռաւոր երկրներու մէջ եղող քոյր եկեղեցիներուն պատմութիւնը լսելով: Մանաւանդ մխթարուեցան եւ քաջալերուեցան իմանալով որ տարագրութեան մէջ ապրող մեր տառապեալ եղբայրութեան մէջ հաւատքի եւ աղօթքի կայծը կայ և կը մնայ:

Եւ ահա վերջապէս տունն եմ: Հոս հասայ Հոկտեմբերի վերջին օր կէս գիշերուան ատեն՝ տասնեւմէկ ամիս բացակայութենէ ետքը: Երկաթուղիի կայարանը զիս զիմաւորել եկած էին ընտանիքէս զատ եկեղեցիին Ջանից Ընկերութիւնները խմբովին: Դեռահաս դէմքերը եւ անկեղծ սիրալիր աչքերը տեսնել շատ անոյշ էր, եւ ուղեւորութեան բոլոր յոգնութիւնները թաղուեցան այդ քաղցր փորձառութեան մէջ: Կը մաղթեմ որ Աստուած այդ շնորհ-

քը մէն մի հովիւ եղբորս տայ:

Ահա դարձեալ մտայ հովուական լուծին տակ: Վիզս լուծին տակը դրի: Կը տեսնեմ որ լուծը չի փոխուիր վիզը փոխուելու է. ես կը ջանամ անոր մեկանուն քնիրը, որոնք քիչ մը պնդացեր են, սեղմելով յարմարցնել լուծին:

Երբեմն շարժապատկերի նման աչքիս առջեւն տուաւ կանցնին վերջին տարուան տեսարանները: Երկիրները որոնց մէջէն ճամբորդեցի, եկեղեցիները եւ ժողովուրդները որոնց խօսելու արտօնուեցայ, հովիւները որոնց ձեռքը եղբայրաբար իմին սեղմեցին, բազում ջերմ հաւատացեալներ, քոյրեր որոնց հետ խօսակցեցայ եւ աղօթեցինք, ամէնը մտքիս տախտակին վրայ անջընջ կիւիօրէն տպուորուած կը մնայ: Ճոր Աւետարեիրէն կը խնդրեմ որ բարեհաճի սիրալիր անկեղծ ողջոյն հաղորդել անոնց իւրաքանչիւրին և ամենուն:

Վաղը հոս պիտի գումարուի Քալիֆորնիոյ Հայ Աւետարանական Միութեան հովիւներուն տարեկան Առանձնացումի ժողովը: Անոնց պիտի պատմեմ Ֆրանսայի, Յունաստանի, Եգիպտոսի և Սիւրիայի եկեղեցիներուն վիճակը և մի առ մի պիտի ծանօթացնեմ հովիւները և գործիչները: Մեր հեռաւոր եղբայրներուն համար պիտի աղօթենք որ հաւատքի և ջանքի մէջ անսասան մնան: Եւ հիմայ կը խնդրեմ որ անոնք ալ բարեխօսաբար մեզ ներկայացնեն Շնորհաց Աթոռին:

Հոլիւ եղբայրներուս զատ զատ նամակ գրել անկարելի եղաւ: Արդ կ'աղաչեմ որ ներկայ գրութիւնը առանձին թուղթի համազօր համարելով զիս շնորհապարտ ընեն: Տէրը ձեզ օրհնէ:

Յկրկին տեսութիւն,

Մ. Կ. ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՐԺԷՆԹԻՆԱՅԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Գրեց՝ Յ. Ա. ՀԱԼԷՊԼԵԱՆ

Մեծ Պատերազմը մեր ազգին համար մեծ ջարդեր և մեծ տարագրութիւններ նշանակեց. Համաձայնական բանակներու յաղթանակը պահ մը մեզի մեծ ազատագրումի յոյսեր ներշնչեց: Բայց շատ չանցած այս ազատագրումը հայրենազրկումի և մեծ ցրուումի վերածուեցաւ: Համաձայնական ոյժերու յաղթանական մուտքը թուրքիա՝ պատճառ եղաւ որ Փոքր Ասիոյ հին բնակիչները իրենց հայրենիքէն արմատախիլ դուրս նետուին և ուրիշ երկիրներ ապաստանին: Այս ցրուողներու մէջ առաջին տեղը կը դրաւէ մեր ազգը, որ այսօր տակաւին կը փնտռէ նոր հայրենիք, նոր միջավայր, գործունէութեան նոր դաշտեր: Ծառեր իրենց հաստատուած երկիրնեքէն տակաւին դժգոհ՝ իրենց աչքերը կ'ուզղեն դէպի նոր հարկւոններ, որոնց մէջ առաջին գիրքը կը գրաւէ Արժէնթինայի Հանրապետութիւնը: Ծառեր Ատլանտեանի այս ափերուն վրայ ապաստանած են արդէն, ասոնցմէ ոմանք յռուեստեա կամ լաւատես լուրեր կը տարածեն, ոմանք վրիկնք հոս տռաջնորդող նաւային գործակալութիւնները կ'անիծեն, և շատ քիչերն ալ Սուրիա կը վերադառնան: Մեր մէկ ազգակիցը երեք ամիս Պուէնոս Այրէս մնալէ ետքը իր առած տպաւորութեան, իր լսածներուն և չափով մ'ալ իր տեսածներուն ազդեցութեան տակ այս տեղի Հայ կեանքին մասին տալ մը գրեց և հրատարակելով ծախեց. հաւանական է որ անոր օրինակները Սուրիա և ուրիշ երկիրներ ալ շրկած ըլլայ: Այս տողերը գրողը ճիշդ եօթը տարիէ ի վեր հոս կը գտնուի. որուն միջոցին իր ըրած ուսումնասիրութեան և խորհրդածութեան իբր արդիւնք մի քանի թեւադրութիւններ կ'ուզէ ընել հոս

դալ մտադրողներուն, խորհելով որ այս կերպով կրնայ անոնց օգտակար ըլլալ:

Հոս գալ փափաքողներուն կ'ուզեմսա հարցումը ուղղել. «Ինչո՞ւ այս երկիրը գալ կ'ուզես»: Ասոր տուած պատասխանիդ համեմատ կ'ուզեմ գիտցածս քեզի ըսել:

Տալիք պատասխանդ թերեւս սա պիտի ըլլայ. «Ես ազատութեան, խաղաղութեան և հանգիստի կարօտցած եմ, ապահով և ազատ երկիր մը կը փնտռեմ, այս պատճառաւ կ'ուզեմ Արժէնթինա գալ»: Եթէ այս է նպատակդ և շարժառիթդ, և եթէ յօժար ես ուրիշ թանկագին բաներդ գոհելու այս թանկագին գանձին տիրանալու համար, երբեք յուսախաբ պիտի չըլլաս երբ հոս դաս: Բու երազածէդ շատ աւելի ազատութիւն, ապահովութիւն և խաղաղութիւն պիտի գտնես: Բու գործունէութեանդ և յառաջդիմութեանդ դէմ ոչ մէկ արգելք չկայ այս երկրին մէջ, որ՝ ընդհակառակը՝ լեցուն է պատահութիւններով: Բու յառաջդիմութեանդ դէմ միայն մէկ արգելք կայ, այն ալ սա է որ ուրիշ մարդեր ալ ինչպէս որ ունեցած նոյն ազատութիւնն ու պատկառանքն ունին: Հոս ասպարէզը շատ ընդարձակ է, բայց վաղողներն ալ շատ են: Մրցակիցներ խիստ բաղմաթիւ են, որոնցմէ շատեր քեզմէ աւելի լաւ պատրաստուած են: Անոնք ունին բաներ որոնցմէ դուն զրկուած ես: Անոնք լեզու գիտեն և գրամի տէր են, դուն կողոպտուած գաղթական մըն ես, չարքաշ իտալացիի և Սպանացիի, տոկուն փոլոնիացիի (լեհ) և Գերմանի հետ պիտի մրցիս: Հրեաներու հետ միատեղ պիտի գտնուիս, որոնք աշխարհի սեղանաւորը և վաճառականը նկատուած են: Բայց դուն յունիս բարոյական և հոգեկան

բարեմասնութիւնները՝ որոնցմէ անոնք զուրկ են: Դուք ոգելից ըմպելիքի և բազմախաղի գերին չեա, շարժապատկերի և թատրոնի մոլին չեա, հագուստի և տան կահաւորումի մէջ արեւմտեան շրջանայութիւնը չունիս, դուք ժամանակը օգտակար կերպով գործածելու վարժուած ես: Ծառ մը ազգակիցներդ մի քանի տարիներու միջոցին իրենց մըրցակիցները անցան, շատերն ալ նեղութիւն կը կրեն իրենց առօրեայ ապրուստը հոգալով համար: Եթէ ազատութիւն, ապահովութիւն, պատեհութիւն կը փնտռես պատրանքի չպիտի մատնուիս:

Թերևս նպատակդ է թուրքիոյ մէջ կորսնցուցած հարստութիւնդ հոս վերստին շահիլ, մի քանի տարուան միջոցին: Այս երազով հոս մի գար, յուսախաբ կ'ըլլաս: Արժէնթինա այնպիսի երկիր մը չէ ուր մարդիկ դիւրութեամբ կը շահին կամ առատ օրավարձք կ'ստանան:

Եթէ Արժէնթինա գալ կը փափաքիս հանդարտ և հաճոյալից կեանք մը ապրելու՝ երբէք գոհացում պիտի չգտնես: Կրնաս հարստութիւն գտնել, բայց ոչ՝ հանգստութիւն: Կրնաս ապրուստդ ապահովել, բայց հանգիստդ կը կորսնցնես: Թուրքիոյ, Սուրիոյ և Պաղեստինի մէջ է՝ն աղքատն ու մուրացիկըն իսկ կրնան բնութեան էն՝ գեղեցիկ օրհնութիւնները վայելել, զոր Արևմուտքի մէջ մեծահարուստները իրենց դրամով չեն կրնար, ինչպէս որ կ'ըսէ Ռընան: «Արևելքը Արևելք է, իսկ Արևմուտքը՝ Արևմուտք. այս երկուքը ոչ մէկ ատեն իրարու կրնան միանալ:» Այս խոսքը թէպէտ ո'չ ամէն պարագային՝ զոնէ այս պարագային ճիշդ է:

Հոս մտաւորական դասակարգի պատկանող Հայերը իրենց ծիրէն դուրս ելած մոլորակներու կը նմանին: Արևմտեան քաղաքակրթութիւնը ֆիզիկական ոյժը կը նախընտրէ մտաւորական ոյժին նոր

հոգամասերու մէջ բնակչութիւն հաստատելու համար: Իշխող տարրը կ'արտադրուի տեղացի ժողովուրդին մէջէն: Բժիշկներ, զեղագործներ, ատամնարոյժներ, ուսուցիչներ, հաշուակալներ չեն կրնար գործել առանց կառավարական արտոնութեան, որուն համար պէտք է քննութիւն տան: Եւ քանի որ ասիկա սպաներէն լեզուով կը կատարուի, և քանի որ պէտք է ամէն աստիճանէ ուսումէն քննութիւն կատարուի՝ մտաւորականները կաշկանդուած գիրքի մը մէջ կը գտնուին:

Այն մարդիկ որոնք իրենց ճաշակը, սովորութիւնն ու նկարագիրը կազմած են՝ դժուարութեան կը մատնուին իրենք գիրքինք նոր միջավայրի, կլիմայի, սովորութիւններու և բարոյական ըմբռնումներու յարմարցնելու մէջ: Այս պարագան նկատի առնելով յայտնի է որ երկտասարդները աւելի դիւրութեամբ կրնան այս դժուարութիւններուն յաղթել:

«Աշխարհը գիտես քու սրտիդ պէս», կ'ըսէ առածը: Հոս եկած մարդերուն Արժէնթինայի մասին գաղափարները կը գունաւորուին միջավայրին իրենց վրայ թողուցած տպաւորութիւններէն: Հետեւաբար շիտակ չ'ըլլար անոնց վրայ յինչով եզրակացութիւններու յանգիլ. ուստի կը խնդրեմ ազգակիցներէս որ շարժելէ առաջ լաւ մը մտածեն և որոշեն իրենց նպատակը, շարժառիթը և փափաքը որ ապա մտատանջութեան չմատնուին:

Պատի մը ծակի մէջէն կրնաս մէկ միլիոն մղոն տեղ տեսնել:

Ծառի մը վրայ եղող խնձորները կըրնաս համբել, բայց խնձորի մը մէջ զըտնուող ծառերը չես կրնար:

Ինչի՞ կ'օգտէ եթէ մորդ բոլոր տշխարհը կը շահի բայց իր ժպիտը կը կորսնցնէ:

ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԸ

(Պատկերակ Նօթեր)

Առաջին քրիստոնեաներ Յիսուսի ծնունդը, չէին տօներ, այլ Անոր յայտնութիւնը որուն առաջին յիշատակութիւնը պատմութեան մէջ կը գտնենք ե. դարուն վերջը: Յիսուս իբր Աստուծոյ Որդի և Մեղիւ յայտնուեցաւ իր մկրտութեան ատեն Յորդանանի մէջ: Հետեւաբար Յիսուսի մկրտութիւնը տօնելի օր մը եղաւ քրիստոնեաներու համար, մանաւանդ: Արեւելեան Եկեղեցիներու մէջ: Կարգ մը երկիրներու մէջ Յիսուսի մկրտող թիւնէն զատ Անոր կեանքին ուրիշ դրուագներն ալ—մօզերու գալուստը, առաջին հրաշքը Գաւնայի մէջ և չորս հազարի կերակրումը—իբր Անոր յայտնութիւնը սկսաւ տօնելի նկատուիլ: Քիչ վերջը, սակայն Յիսուսի ծնունդն ալ սկսաւ տօնուիլ, Յիսուսի յայտնութեան հետ միասին: Արեւմտեան Եկեղեցին, այս երկու տօները իրարմէ զատեց, և իր օրինակին հետեւցան ուրիշ եկեղեցիներ ալ վարդապետական և քաղաքական նկատումներով: Բայց Հայց. Առաք. Եկեղեցին հաւատարիմ մնաց աւանդական սովորութեան և մինչև այսօր նոյն օրը կը տօնէ Յիսուսի թէ՛ ծնունդը և թէ՛ մկրտութիւնը (յայտնութիւն):

Երկրորդ հինէն ի վեր Քրիստոսի յայտնութիւնը և ատեն մը ետքն ալ Անոր ծնունդը կը տօնուէր Յուն վար Յին: Նշանակելի է որ Եգիպտոսի մէջ ճիշդ նոյն օրը Նեղոս Գետի օրհնութիւնը կը կատարուէր: Դ. դարուն կէսէն ետքը, ստիպւին, Հոգովի Պապին միջոցաւ Դեկտեմբեր 25ը դատ տօնի օր նշանակուեցաւ, իբր Յիսուսի ծնունդին օրը: Հինգերորդ դարուն մէջ Անտիօքի, Աղեքսանդրիոյ և Կ. Պօլսոյ Աթոռներէն կողմանէ վերջնականապէս Դեկտեմբեր 25ը ընդունուեցաւ իբր Ծնունդի տօնին պաշտօնական օրը: Հայց.

Առաք. Եկեղեցին՝ հակառակ եղած թելադրութիւններուն և ճնշումներուն միշտ մերժեց Դեկ. 25ը ընդունիլ իբր Ծնունդի օրը: Նոյն խի քննադատեց Հատին և Յոյն եկեղեցիները իբր արեւապաշտութիւն կամ հեթանոսութիւն նկատելով իրենց առած քայլը: Նախաքրիստոնէական շրջաններուն մէջ հեթանոս Եւրոպայի թէ՛ Միջերկրականեան և թէ՛ հիւսիսային Տեւտոնեան ցեղերը ձմեռնային արեւադարձի ատեն, Դեկտեմբեր 19—21 ին, ունէին իրենց մասնայատուկ ազգային տօները, որոնց սովորութիւններուն հետքերը մեծ մասամբ տակուին այսօր կը տեսնուին Դեկ. 25ի Ծնունդի տօնախմբութեանց մէջ: Մինչև այսօր մեզի համար անծանօթ կը մնայ Յիսուսի ծնունդին ճիշդ թուականը: Թէ՛ Դեկ. 25ը և թէ՛ Յունվ. 6ը—որ առաջ միայն Քրիստոսի Յայտնութեան թուականն էր—պատմական, ազգային և վարդապետական որոշ նկատումներով յարմարեալ թուականներ են: Հոս պէտք է յիշել թէ, կարեւորը Ծնունդի թուականը չէ այլ Ծնունդի ղէպը, զոր տօնելու համար բոլոր քրիստոնէութիւնը պէտք է ընդունի միեւնոյն օրը այս կամ այն ամսուն: Քանի որ մեզմէ զատ բոլոր քրիստոնեայ աշխարհը Դեկ. 25ը ընդունած է, մենք ալ կրնանք առանց տատամսելու ընդունիլ զայն: Այս ընելով ալ մէկ ազգային, կրօնական կորուստ մը չենք ունենար ընդհակառակը միութեան կապ մը ևս հաստատած կ'ըլլանք բոլոր քրիստոնէութեան հետ:

Հայց. Եկեղեցին կողմանէ Քրիստոսի յայտնութիւնը (իւր մկրտութեամբ) աւելի կարեւոր նկատուած է քան Անոր ծնունդը, որ ետքի յաւելուած մըն է առաջինին վրայ: Անգլիոյ մէջ Գրոմուէլեան յիդափոխութեան միջոցին, երբ

Մաքրակրօնները (Puritan) իշխեցին հոն, փարլամենթի որոշումով Ծնունդի տօնը ջնջուցաւ և ժողովուրդին արգիլուեցաւ այդ օրուան հանդիսութիւնները։ Մաքրակրօնները բացարձակ հեթանոսութիւն նկատեցին Ծնունդի տօնակատարութիւնը։ Այս գաղափարը անոնք հետեւին Ամերիկա տարին։ Ամերիկեան Միսիօնարները երբ Թուրքիա եկան Բողոքականութիւնը քարոզելու՝ Հայ Բողոքականներուն տուին իրենց աւանդը հաւատարմաբար, որով առաջին Հայ Աւետարականները Ծնունդը չէին տօնել։

Արեւմուտքէն մեր մէջը ներմուծուած նորութիւններ են Սանթաֆուգը և Ծնունդի Ծառը, որոնք թէպէտ ընդհանրացած չեն տուներու մէջ, ծանօթ են գրեթէ բոլոր Հայերուն։ Սանթաֆուգը աղաւաղեալ ձեն է մանուկներու պաշտպան Սուրբ Նիկողոս (St. Nicholas) հայրապետի, որ աւանդութեան համեմատ երեք օրիորդներու օժիտը նուիրած է։ Իրականին մէջ, սակայն, մանուկներու նուէր բաշխող այս պապուկը նախաքրիստոնէական ծագում մ'ունի, թաղուած Տևտոն ցեղերու գիցարանական մշուշին մէջ։ Ծնունդի ծառը, նոյնպէս, զարդարուած մոմերով, այլևայլ նուէրներով նորիկ ցեղերու, հաւանաբար, հեթանոս շրջանին մէկ մնացորդն է, որ մեզի կը ներկայանայ այսօր քրիստոնէացած երևոյթով մը։ Այսօր աշխարհ Գերմաններուն կը պարտի թէ՛ Սանթաֆուգը և թէ՛ Ծնունդի Ծառը։ Սովորելին ժ. Գարու կէսէն վերջը հազիւ ընդհանրացած է։ Իտալացիները, սակայն, չունին այս սովորութիւնը, անոնք իրենց նուէրները կուտան նոր տարուան առաջին օրը, ինչպէս որ մինք Հայերս ունինք մեր կաղանդը և Սանթաֆուգի համար կը գործածենք Պապուկ կաղանդը։

Ծնունդի տօնին առթիւ ընդունուած,

և բոլոր աշխարհին վրայ տարածուած սովորութիւն մ'է շնորհաւորութեան քարտեր ղրկել։ Ասիկայ նորոյթ մըն է, յղացումը Ամերիկացիի մը հազիւ ժ. Գարու կէսին (1844)։ Մեր մէջ տակաւին ընդհանրացած չէ այս, Հայերուն աւանդական սովորութիւնը եղած է շնորհաւորումը կատարել անձամբ տունները այցելելով որ ունի թէ՛ ծանօթալի կողմերը և թէ՛ քարեմասնութիւնները։

Ամէն երկիր և ժողովուրդ Ծնունդը տօնելու համար իր մասնաւոր սովորութիւնները ունի, որոնք նախաքրիստոնէական շրջանի հեթանոս տօներու զօրաւոր հետքերը կը կրին յաճախ, բայց որոնք քրիստոնէական անունին և դիմակին տակ ծածկուելով կրցած են մինչեւ մեզի հասնիլ։ Ուտեօտեղէնի և խումիլի ճոխ եւ շատ անգամ անպէտքէն շուայլ սեղաններ հին եւ նոր ժամանակներու մէջ շատ մը ժողովուրդներու կողմանէ ընդունուած սովորութիւն մ'էր։ Տօնի ամենակարեւոր մասը կը կազմէր սեղանի շուրջը նստիլ, ուր համագում կերակուրները կ'առաջնորդուէին մասնաւոր երգերով եւ երաժշտութեամբ։ Այս եւ ուրիշ շատ մը նման սովորութիւններ ճշմարիտ քրիստոնեաներու կողմանէ խստօրէն քննադատուած են՝ իրր հակաքրիստոնէական։ Բայց այս բոլորին մէջ կայ լուսաւոր գիծ մը, զոր կ'արժէ մասնաւոր կերպով յիշել։

Իր զուտ քրիստոնէական կրօնական արժէքէն զատ Ծնունդի տօնը եղած է բարեպատեհ առիթ մը յիշելու կարօտները ինքնաբերական նուէրներով, եւ որոնց միջոցաւ Յիսուսի այլաւիրական ոգին այնքան զեղեցիկ կը ցոլայ։ Ծնունդը միեւնոյն ատեն տօնէ մանուկներուն, որոնք այս առթիւ մասնաւոր գուրգուրանքի եւ յիշատակութեան առարկայ կ'ըլլան եւ ընտանեկան անմեղ խրախճանքներու միջոցին անոնք կեդրոնական դիրք մը կը զբաւեն։ ***

Թէ ԻՆՉՈ՞Ւ ԶԱՆԳԱԿՆԵՐԸ ՀՆՁՆԵՑԻՆ

Թարգմ. Յ. ՊԱԳԴԱԼԵԱՆ

Ատենօք շատ, շատ հեռու երկիր մը կար. խիստ քիչ մարդիկ միայն մինչեւ հոն ճամբորդած էին: Այն երկրին մէջ հրաշալի եկեղեցի մը կար. այս եկեղեցին մեծ քաղաքի մը բարձր մէկ բլուրին վրայ շինուած էր. և ամէն կիրակի օրեր, ինչպէ նաև նուիրական օրեր, որպէս Ծնունդի օրը, հազարաւոր մարդիկ քլուրն ի վեր կը մագլցէին զէպի եկեղեցիին կամարակապ մուտքը: Հեռուէն նայողին անոնք կը նմանէին մըլիններու երկայն գլծի մը, որոնց ամէնը միւս կողմը կ'երթային:

Երբ եկեղեցիին հասնէիր, պիտի տեսնէիր քարէ սիւներ, մութ անցքեր, և մեծ դուռ մը՝ որ կ'առաջնորդէր եկեղեցիին մէջ, որ խիստ մեծ սենեակ մըն էր. այնքան մեծ՝ որ մէկ դուռը կ'հցող մը հազիւ կրնար մինչեւ միւս դուռը տեսնել: Ամենահեռաւոր մասը երգիչ խումբին յատկացուած տեղն էր, ու հոն էր նաեւ եկեղեցիին երգեհոնը: Այս երգեհոնը այնքան բարձր ձայն մ'ունէր՝ որ երբեմն երբ որ նուագուէր, չըջակայքը մղոններով հեռուն ելող տուներու պատուհանները կը գոցէին կարծելով թէ կարկտախառն փոթորիկ մը փրթաւ: Վերջապէս ասանկ եկեղեցի մը ասկէ առաջ Կրքեք տեսնուած չէր, մանաւանդ երբ տօն օրեր կը լուսազարդուէր, և ժողովուրդը, մեծ ու փոքր, կուգային ու հոն կը լեցուէին մեծ բազմութեամբ: Իայց այդ ամբողջ շէնքին մէջ ամէնէն զարմանալի բանը անոր տարօրինակ զանգակատունն էր:

Եկեղեցիին մէկ անկիւնը գորշ քարէ մեծ աշտարակ մը կար. ու բաղնիքները անոր վրայ փաթթուելով բարձրացած էին այնքան վեր՝ որ հազիւ կարելի էր աչքով տեսնել, որովհետեւ աշտարակը

այդ մեծ եկեղեցիին յարմարելու չափ բարձրութիւն ունէր. այնքան բարձր էր որ միայն օդը բաց ու պայծառ եղած ատեն մարդ կրնար պնդել թէ անոր գագաթը կրնար տեսնել, և մինչև անգամ այն ատեն մարդ անոր ծայրը տեսնելուն կատարելապէս վստահ չէր կրնար ըլլալ: Կրցածիդ չափ բարձր նայէ, քարերն ու բաղնիքները անկէ ալ բարձր կ'երևին. և քանի որ այդ աշտարակը շինողները հարկւրաւոր տարիներ առաջ մեռած էին, ոչ ոք կրնար յիշել թէ որչափ բարձր ըլլալու էր ան:

Արդ, ամէն մարդ զիտէր թէ այս աշտարակին գագաթը խումբ մը Ծնունդեան քաղցրահնչիւն գանգակներ կը գտնուէին, եկեղեցիին շինուած օրէն ի վեր այդ զանգակները հոն էին, ու անոնք աշխարհիս ամէնէն գեղեցիկ զանգակներն էին: Ըստ ոմանց՝ ասորպատճառը սա էր թէ այս զանգակները մեծ երաժիշտ մը շինած և հոն դրած էր: Ուրիշներ կ'ըսէին թէ ատոնց այնքան քաղցր ձայն ունենալուն պատճառը իրենց այնքան բարձր տեղ մը գտնուիլն է, ուր օդը ամենամաքուր և ամենայնատակ է:

Պատճառը ինչ որ ալ եղած ըլլայ, այդ զանգակներուն ձայնը լսող ամէն մարդ, առանց բացառութեան, կը հաստատէր թէ անոնք աշխարհի ամէնէն քաղցր մեղեդիներն ունէին:

Ոմանք այս ձայնները կը նմանցնէին հրեշտակի ձայներուն, որոնք վերը երկնից մէջ կ'երգէին. ուրիշներ կ'ըսեն թէ անոնք ծառերուն մէջէն մեղմիկ անցնող հովերուն զարմանալի եղանակներուն կը նմանին: Սակայն իրականութիւնը այն էր որ շատ տարիներէ ի վեր ոչ ոք լսած էր զանոնք: Ծեր մարդ մը՝ որ եկեղեցի-

ին մօտերը կ'ապրէր, կը պատմէր թէ իր մայրը զանոնք լսած է եղեր հրը տակաւին փոքր աղջիկ մըն էր, և միակ այս մարդը կար որ կատարեալ վստահութեամբ կրնար անոնց մասին խօսիլ: Այս վարդուն ըսածէն կը հասկցուէր որ այդ զանգակները Մնունդի զանգակներն էին. ուստի ոչ ոք կրնար դպչիլ անոնց, մանաւանդ հասարակօրեր: Մարդիկ սովոր էին Մնունդի իրիկունը եկեղեցի բերել իրենց Մանուկ Յիսուսին տալիք նուէրները, և երբոր ամենամեծ և ամէնէն ընտիր նուէրը սեղանին վրայ կը դրուէր, այն ատեն վերէն՝ աշտարակին զապաթէն Մնունդի զանգակներու մեղեգին երգիչ խումբին երաժշտութեան մէջէն կը հնչէր քաղցրածայն: Ոմանք կ'ըսէին թէ հովերը զանոնք կը հնչեցնէին, ոմանք ալ կ'ըսէին թէ անոնք այնչափ բարձր են որ հրեշտակները միայն կրնային շարժել զանոնք:

Բայց շատ մը երկար տարիներէ ի վեր անոնց ձայնը երբեք լսուած չէր: Կ'ըսէին թէ մարդիկ Յիսուս Մանուկին տալիք նուէրներու մասին պէտք եղած ուշադրութիւնը չէին ընէր, ու չը կար բերուած այնքան մեծ նուէր մը որ արժանի ըլլար զանգակներուն քաղցրածայն մեղեգիին:

Ամէն Մնունդի իրիկուն տակաւին հարուստները կը խոնուէին սեղանին առջեւ, ու ամէն մէկը կ'աշխատէր ուրիշներուն բերածէն աւելի լաւ նուէր մը տալ. սակայն ոչ ոք իրեն պէտք եղածը կը բերէր: Ու եկեղեցին մեծ բազմութեամբ կը լեցուէր, անոնց ամէնն ալ կը խորհէին թէ թերեւ զանգակներուն զարմանալի ձայնը նորէն կրնայ լսուիլ: Սակայն, հակառակ այնքան փառաւոր պաշտամունքներուն, հակառակ այնքան անուշ ու ճոխ նուէրներուն, վերջը քարէ աշտարակէն միայն ու միայն հովին սուլիլը կը լսուէր:

Այդ քաղաքէն քանի մը մղոն հեռու

գիւղ մը կար. այդ գիւղէն առ մեծ եկեղեցին երբեք չէր տեսնուէր, միայն օդը շատ պարզ ու երկինքը կապոյտ եղած ատեն՝ միայն աշտարակին մէկ մասը կ'երեւէր, ան ալ խիստ աղօտ կերպով: Այս գիւղին մէջ կ'ապրէին Պետրոս անուն տղայ մը և իր եղբայրը: Անոնք Մնունդի զանգակներուն վրայով շատ քիչ բան գիտէին. բայց լսած էին թէ Մնունդի իրիկունը ի՞նչ ազդորպաշտամունք տեղի կ'ունենար, ուստի իրարու հետ խօսքը մէկ ըրին, որ երբ որ պատեն հոթիւն գտնեն երթան այդ գիւղեցիկ առնախմբութիւնը տեսնելու:

«Մարդ չի կրնար երեւակայել, փոքրիկ եղբայրս», կ'ըսէր Պետրոս, «այն բոլոր գեղեցիկ բաները, որ կարելի է տեսնել ու լսել հոն, մինչև անգամ կ'ըսեն թէ Յիսուս—Մանուկը երբեմն վար կ'իջնէ հոն և պաշտամունքը կ'օրհնէ: Ո՛վ գիտէ, թերեւ զինքն արտեսնենք:»

Մնունդին մէկ օր առաջ սաստիկ ցուրտ էր, ձիւնի հատիկներ աստ անդ կը թռչտէին օդին մէջ, իսկ գետինը ճերմակ կեղեւով սառած էր: Պետրոս ու իր փոքր եղբայրը կէսօրէն անմիջապէս վերջ ճամբայ ելան. ու թէև այն սառնամանիքին մէջ քալիլը դժուար էր, բայց անոնք ձեռք ձեռք բռնած, այնքան տեղ քալիւ էին որ իրիկուն չեղած անոնք իրենց գիմացը տեսան մեծ քաղաքին լոյսերը:

(Շարունակելի)

Մեծագոյն բանը՝ զոր մարդկային հոգին երբեք կ'ընէ՝ բան մը տեսնել է: Հարիւրաւոր մարդիկ կը խօսին անոր մասին որ կրնայ խորհիլ, բայց հազարաւորներ կրնան խորհիլ մէկու մը համար որ կրնայ տեսնել: Գոտակ կերպով տեսնել բանաստեղծութիւն, մարգարէութիւն և կրօնք է միանգամայն:

ՐԸՍՓԻՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

**ԻՆՉ ՈՐ ԻՄՍ Է ԻՆՑԻ
ԿԸ ՊԱՏԿԱՆԻ**

Քարոզիչներու իշխանը, Վեր. Զ. Զ. Սփըրճըն աղքատներու համար իր առատաձեռնութեամբը նշանաւոր էր մանաւանդ Մնուէղի տօնին առթիւ: Անգամ մը 4000 անգլ. սսկինոց փոխգիր մը (չէք) նուիրուեցաւ իրեն: Նուիրատուն Սփըրճընի դառնալով ըսաւ. «Տէր, կը յուսամ որ այս դրամը քեզի և Տիկ. ԸՍփըրճընի համար պիտի դորձած էք, փոխանակ անոր մեծ մասը ուրիշներուն ծախսելու՝ ինչպէս որ ասկէ առաջ շատ անգամներ ըրած էք:» Սփըրճըն չէքը ընդունեց, շնորհակալութիւն յայտնեց և նստելէ առաջ շեշտակի մարդուն ուղղուեցաւ եւ մատը անոր վրայ շարժելով ըսաւ. «Բայց հո՞ս նայէ, մի համարձակիր ինծի ըսելու ինչ որ ես պէտք է իմ զըրամովս ընեմ:»

ՃՆՇՈՒԱՅ ԾԱՂԻԿԸ

Մնուէղի օր մը բանաստեղծ Հուրթիւրի ապակիի երկու կտորներու մէջտեղ ճնշուած ծաղիկ մը նուիրուեցաւ: Եթէ մէկ կողմէն դիտուէր ծաղիկը միայն անկերպարան զանգուածի մը պէս կը տեսնուէր, բայց միւս կողմէն անիկա իր բոլոր սիրուն նրբութեամբը կը փայլէր: Բանաստեղծը այս նուէրը իր պատուհանին ապակիէն կախեց: Դրան նայողները անոր գեղեցկութիւնը չէին տեսներ, բայց բանաստեղծը կը հրճուէր անոր սիրունութիւնը վայելելով: Աստուծոյ շատ մը նախախնամական գործերը մեզի համար այսպէս երկու կողմ կ'ունենան. ընտանիքէն դուրս գտնուող

աշխարհիկներուն համար անոնք անիմաստ և խառնակ բան մը կը թուին, բայց ներսը եղող զաւակին համար անիկայ գեղեցկութիւն ունի:

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԸ ԽՐԱՄՆԵՐՈՒ ՄԷՁ

1870ի Ֆրանքօ—Փրուսիական Պատերազմի միջոցին, Խթումի իրիկունը խուճը մը կամաւորներ փարիզի պաշտպանութեամբը զբաղած էին: Այդ ցուրտ գիշերին մարդերէն մէկը խրամէն մեկնելու համար արտօնութիւն խնդրեց. «Անկարելի է, դուն Փարիզ կ'ուզես երթալ,» պատասխանեց հարիւրապետը: «Ոչ, ես կ'ուզեմ գէպի այդ կողմը երթալ,» ըսաւ զինուորը Գերմանները ցուցնելով: Հարիւրապետը բարկացաւ, բայց արտօնեց որ երթայ ու աւելցուց. «Դուն թերեւս կ'ուզես սպաննուիլ:» «Ո՛չ, մի՛ վախճար,» ըսաւ զինուորը և դուրս ցատկելով սառած ձիւնի վրայէն դէպի թշնամին յառաջացաւ: Գերման պահակներու լսելի հեռաւորութեամբ տեղ մը կանգ առաւ, բարեւեց և սկսաւ երգել «Մնուէղ, Մնուէղ, Քրիստոս է թագաւոր Իսրայէլի:» Գերմանները երբեք չչարժեցան, մարդը իր երգը լւմնցուց, բարեւեց, և ետ դարձաւ: Ծիշգնոյն ատեն Գերման զինուոր մը ձիւնի վըրայէն Ֆրանսական զինուոր յառաջացաւ, ինքն ալ բարեւեց և նոյն երգին գերմաներէնը եռանդով երգեց զինեալ զուամարտակներու մէջտեղ կայնած: Եւ երբ կրկնեցին հասաւ, երկու թշնամի բանակներու բոլոր զինուորները միասնաբար երգեցին «Մնուէղ, Մնուէղ, Քրիստոսն է Իսրայէլի փրկիչը»: Եւ Խաղաղութեան Իշխանին ներկայութեանը բոլոր թշնամութիւնը դադրեցաւ մի քանի ժամուան համար:

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՀԱՆԼԵՊ ԳՈՒԼԵՃԻ Վարչական Ժողովը՝ միայն Մր. Փարթրիճի բացակայությամբ որ ներկայիս Ամերիկա կը գլուխուրդէ իր լիազօրմար հաւաքոյթը ունեցաւ Դեկ. 29-ին, մասնակցութեամբ Այնթապէն Մր. Այգլիի և Պէյրութէն Փրոֆ. Զ. Պէզճեանի, և կարեւոր որոշումներ ըրաւ, որոնց մէջ նաեւ հետեւեալք.

1. Մր. Քարլթըն Ամերիկեան Պորտի Մերձաւոր Արեւելքի Առաքելութեան կողմանէ նշանակուած ըլլալով Գոլէճի մէջ գործելու, որոշուած է զայն հրաւիրել Գոլէճի մէջ պաշտօնավարելու իբր ուսուցչապետ. Տէր և Տիկ. Քարլթըն (ծնեալ Միսթէշ) Մարտի մէջ հասած պիտի ըլլան քաղաքս:

2. Բարձր Գոմիսէրութեան Նոյ. 15, 2281 թուակիր որոշումով արտօնութիւն տրուած է «Հալէպի մէջ վերաբանալ և վարել... կրթական հաստատութիւնը որ առաջ կը գործէր Այնթապի մէջ»: Որոշուած է վերաբացումը յետաձգել մինչև որ Գոլէճի մը ծրագիրը յառաջ տանելու համար անհրաժեշտ բոլոր յաւելումները պատրաստուին:

3. Որոշուած է ծախու առնել շարժապատկերի միջոցով, մը, զոր Միս Եփէ կ'առաջարկէ աժան գինով ծախել:

1931—32-ի տարեկան պիւտճէն խորհրդակցութեան առարկայ եղած և մասամբ որոշուած է:

Վերջին վեց ամսուան միջոցին ընդունուած դրամական և գրական նուէրները և կատարուած թղթակցութիւնք տեղեկագրուած են:

Մր. Այգլի երկուշաբթի կէսօրէ ետքը Հայ Աքուլի աշակերտներուն խօսած է Թուրքիոյ և մասնաւորապէս Այնթապի մէջ տիրող պայմաններու մասին: Եւ Վեր. Հ. Հ. Րիկզ ալ երեքշաբթի առտուն խօսած է:

ՆԵՐՔԻՆ ԱԽԵՏԱՐԱՆՁՈՒԹԵԱՆ Գործադիր Մարմինը Դեկ. 29—30-ին երեք նիստերէ բաղկացեալ իր ժողովը ունեցած է, որուն միջոցին Հալէպի և Պէյրութի Շրջաններուն տարեկան պիւտճէները երկար և ուշադիր խորհրդակցութեան առարկայ եղած և Կեդրոնական Գործադիրին զրկուելու համար իրենց վերջնական ձեւին մէջ պատրաստուած են: Կեդր. Գործադիրի քարտուղար Վեր. Ա. Պետրիկեանի նամակը կարգացուած և որոշուած է զինք հրաւիրել Սուրիան այցելելու համար:

ՄԻՈՒԹԵԱՆՍ ՀԱՆԼԵՊԻ Շրջանին Վարիչ Մարմինը իր նիստը ունեցաւ Դեկ. 27-ին: Վարչութիւնս իր Նոյեմբերի նիստին մէջ գրութեամբ մը յանձնարարած էր բոլոր եկեղեցիներուն որ իրենց հոգեւոր տուրքերը աւելցնեն: Այս նիստին մէջ ևս նոյն հարցը նկատի առնուած է և կազմուած է չորս անդամներէ բաղկացեալ մասնախումբ մը բոլոր եկեղեցիներու մէջ աշխատելու համար որպէսզի իւրաքանչիւր Աւետ. համայնքին ամէն մէկ անդամը շարաթական տուրք մը վճարէ: Պէյրութի Շրջանին Վարիչ Մարմինն ալ նոյն նպատակաւ նման քայլեր առած է:

Ժողովս որոշած է նաեւ տարեկան ազօթքի եօթնեակը սկսիլ Յունվար 11-ին, ընդհանուր նիւթ ունենալով «Անհատ եկեղեցիներու Հոգեւոր կեանքը»: Մասնախումբ մ'ալ որոշուած է ամէն օրուան համար նիւթեր թելադրելու:

ՆՈՒԷՐ

«ՆՈՐ ԱԽԵՏԱԲԵՐ»-Ի

Բժշկապետ Ա. Ա. Այթունեան 50 սուրբական ոսկի կը նուիրէ «ՆՈՐ ԱԽԵՏԱԲԵՐ»-ի:

ՅԱՆԿ ՆԻԻԹԵՐՈՒ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՅՕԴՈՒԱՇՆԵՐ

ԹԻԻ

		Թէ Ինչո՞ւ Հնչեցին Զանգակները	23—24
		Թոյներ և Թունաւորում	16
		Թակոր	19, 20, 21, 22
Ա. Ալթունհանի (Տոգթ.) Յոբելիանը	22	Ժողովրդային Բարոյականութիւն	22
Աղաչանք Մը	1	Ի Յիշատակ Օր. Ա. Ճէպէճանի	8
Աղեղն ու Երգը	23-24	Ի՞նչ է Եկեղեցին	14
Աղօթքի մը Պատասխանը	10	Ինչո՞ւ Աղօթենք	6
Ամազիբի Պարոջական Հանդէսները	17	Ինչո՞ւ Զեն Սիրեր զԱստուած	6
Ամէն Վերջաւորութիւն Սկզբնաւորութիւն մ'է	23-24	Ինչպէ՞ս կը Դիտեն	11
Այլասերած Եկեղեցին և Տնտեսական		Ինչպէ՞ս Կառավարելու է Կ. Դպրոցի	23—24
Տաղնապը	14	Պաշտամունքը	11
Այց մը Ի Ղազիր	21	Ինչպէ՞ս կը Գնահատեն	6
Անակնկալ Հանդիպումը	8	Ինչպէ՞ս Պէտք է Հասկնալ Առականը	3
Անանուն Հիփոթոթիւն	12	Ինչպէ՞ս Պէտք է Խորհինք Եկեղեցի-	17
Անկիբան Եկեղեցին և Միութիւն	18	ներու Մասին	18
Անտեսանելի Աշխարհը	2	Ինչո՞ւ Պէտք է ոյժ տալ Արարերէնի	15
Աստուծոյ Ծնորհքը Կեանք է	8	Ի Պատիւ Կալվինի	14
Արժէնթինայի Մասին Ծնթք.	23-24	Լոնտոնի Ս. Մարգրինոս Եկեղեցին	20
Աւետ. նթ. և Ազգայնականութիւն	15	Լուս Աղօթք	18
Աւետ. նթ. և Ընկերային Կեանք	16	Խաչի Ճամբան	
Աւետարանականութն. և Գրականութն.	20	Խաչի Տօնը	
Աւետարանականութն. և Կրթական Կեանք	18	Ծնունդի Երգը (Պատմութեամբ Տիքընի)	
Աւետարանականութեան Նպատակը	21	2, 3, 4, 6, 7, 8, 9, 10, 11, 12,	
Աւետ. նթ. և Աւետ. Եկեղեցի	22	13, 18, 19, 20, 21, 22	
Աւետ. Եկեղեցին Կոչումը	4	Ծնունդի Վարդը	23—24
Աւետ. Մասնախումբի Որոշումները	5	Ծնունդի Տօնը	23—24
Բանջարեղէններու Արժէքը	20	Կայծեր	15
Բարեկամական Կարգադրութիւն	14	Կանտի	9, 10, 11, 13
Բողոքականութիւնը Ի՞նչ է	16	Կեանքի Ճաշակը	15
Բողոքականութիւնը Պ. Այրէսի մէջ	15	Կենսամիտ Նորութիւններ	17
Գիտութեան Անլուծելի Հանելուկները	22, 23-24	Կ. Դպրոցը	17, 18
Գիտութիւն և Կրօնք	13	Կոնգակ մը (պատմական)	13
Գիրքերը	19	Կրօնական Հալածանքը	19, 21
Դաս մը Ալպեաններու Արեւէն	4	Հալէպի Քէմփի Աւետ. Եկեղեցին	16
Դրուագ մը Ժան Ժաք Բաւսոյէն	13	Համերաշխութիւն	11
Եկեղեցական Միութիւն	12	Հայաստան Թրքերէն Ս. Գիրքը	3
Եղիշէ Պատրիարք Դուրեան	10	Հայ Առաք. Եկեղեցին Ներկայ Վի-	
Երանինք	12	ճակը և Հայ Աւետ. ները	10
Երկրորդ Մղանը	11	Հայ Աւետարանականութեան Բնորոշիչ	
Ընկերներդ Որո՞նք են	12	Գիծը	14, 15, 16, 18, 20, 21, 22
		Հայ Գաղթականներու Տեղաւորումը	10

	ԹԻԻ		ԹԻԻ
Հայ Աւետ. Եկեղեցւոյ Կազմակերպումը		Պակաս Ս. Դիրք	5
Պ. Այրէսի մէջ	8	Պարիկին Նոր Տարուան Նուէրը	3
Հայրական Սէրը	14	Պեղումներ Ս. Գրային Երկիրներու Մէջ	5
Հաստատ Կռումը	2	Պէյրութի Ք. Ջ. Ընկերութիւնը	8
Հաւատք	15	Պէնտէկոստէի Տարեգարձը	11
Հաւատք և Յառաջդիմութիւն	14	Պէնտէկոստէի Քրիստոնէութեան Ա-	
Հիւանդ Ցեղ մը	16	պայույցն է	12
Հոգեգալուստի Տօնակատարութիւն	14	Պողոս Նուպար	21
Հոգին Սուրբ Ի՞նչ է	13	Ռ. Էզաճեանի Մահը	15
Ճամբու Նօթեր	14, 16, 18	Ս. Գիրքը Իբր Կրթիչ Ազգակ	2, 3
Մանկան Նախազարոյցական Շրջանի		Ս. Գրքի Հեղինակը	1, 2
Վտանգները	17	Սուրբոյ Հայ Աւետ. Միութեան Տա-	
Թանուկին Իրաւունքը	23-24	րեկան Ժողովը	9
Մանուկներու Կրօնական Դաստիա-		Ս. Սահակ և Ս. Մեսրոպ	6, 8, 9
րակութեան Շուրջ	17	Սուղ Քրիստոնէութիւնը	1
Մարդուն Գլխաւոր Գործը	18	Վարդանանց	4
Մեծագործ Բայց Սնամէջ Բառեր	5	Վեր. Մ. Կ. Փափազեան և Տէր—Ջօր	14, 15
Մեծն Ներսէս	4, 5	Վեր. Մ. Կ. Փափազեանի Մեկնումը	14
Մեր Մեծագոյն Պէտքը	3	Տակաւին Ձէր Ճանչնար	20
Մեր Դպրոցներուն Ելեւմուտքը	17	Տէրը Ի՞մ Հոգիւս է	10
Միայն Յիսուս	21	Տպաւորութիւններ, Դիտողութիւններ	9
Միջազգային Միտինարական Ժողովը	10	Փրինս Էտուըտ Կզդին	18
Միսը Իբր Սնունդ	19	Քրիստոնէական Յայանութիւններ և	
Մի՛ Փրցըներ Տէր	15	Գիւտեր	5
Յ. Գրիգորեանի Յորեկեանը	7	Քրիստոսի Վարդապետութեան Հոգին	
Յ. Գրիգորեանի (Փրոֆ.) Ծննդեան 75րդ		14, 15, 18, 21, 23—24	
Տարեգարձը	9	Քրիստոս և Անհատը	8
Յիսուսի Ազգութիւնները Պէ՞տք է Սոր-		Քրիստոս և Դպրոց	10, 12
վեցնել	17	Քրիստոս և Աստուծոյ Թագաւորու-	
Նախկին Այնթապի Բ. Եկեղեցիին Ժո-		թիւնը	6
ղովը	11	Օդ և Առողջութիւն	6
Ն. Ի. Բիլիֆ և Կիլիկիոյ Կաթողիկո-		ԱՇԽԱՐՀԻՍ ՇՈՒՐՁ	11
սութիւնը	16	ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ	18
Նոր Կտակարան և Ընկերային Հարցեր	5	ԿՐՕՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ	2
Նոր Ուսուցիչներու Պատրաստութիւն.	17	ՆԱՄԱԿՆԵՐ	13, 23-24
Ո՞ր Լեզուները Պէտք է Սորվեցնենք	17	ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ	14, 15, 19, 20
Ո՞վ Կրնայ Փրկուիլ	20	ՇՈՂԵՐ	1, 2, 3, 4, 5, 6, 13, 19, 20,
Որչափ Երկար Պիտի Ապրիւս	4		21, 23-24
Ուղերձ	16		
Ու. Ն. Ձէյմպըրսի Ծննդեան 75 րդ.			
Տարեգարձը	9		
Ու. Ն. Ձէյմպըրս (Տր.)	11, 12		
Ոչնչացում կամ Նուաճում	16		

صاحب متياز و مدير المسئول

الانجيس قره بت هاروتونيان

